ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 45 90 47

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

# Սյունյաց երկիր

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
25 ՄԱՐՏԻ 2015Թ. № 8 (351)

www.syuniacyerkir.am

**Գործն է անմահ,**
**լա՛վ իմացեք,**
**Որ խոսվում է**
**դարեդար...**
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ



Ազատ Գասպարյան
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ տնօրեն

# Մեղրու ճանապարհաշինական ընկերությանը՝ ՀՀ կառավարության մրցանակ

Մրցանակաբաշխություն

**Մարտի 10-ին Երեւանում՝ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Արարատ» սրահում, տեղի է ունեցել արտադրանքի եւ ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. մրցանակաբաշխության պաշտոնական արարողությունը:**

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գառնիկ Բադալյանը, Ռուսաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման եւ համապատասխանության գնահատման գծով փոխնախագահ Անդրեյ Լոցմանովը, Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը, մրցանակների արժանացած կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաեւ Հայաստանի խոշոր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչներ:

Միջոցառմանը ներկա էր նաեւ ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը:

Մինչ ընկերություններին մրցանակների հանձնումը, միջոցառումը բացել եւ ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գառնիկ Բադալյանը:

Հայաստանի կառավարության անունից ողջունելով միջոցառման մասնակիցներին, Գ. Բադալյանը նշել է, որ Հայաստանի կառավարությունը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում հայրենական արտադրողներին հուզող խնդիրները, ինչպես նաեւ փորձում

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 7

# Կա՞ երաշխիք, որ Կապանի սպանդանոցում կրկին չի մորթվի բրուցելյոզով հիվանդ անասուն

Արտակարգ դեպք

**Ս.թ. մարտ ամսվա սկզբին Կապան քաղաքի 18 բնակիչ տեղափոխվեց տեղի հիվանդանոց (մեկը՝ Երեւան)՝ բրուցելյոզ հիվանդության կասկածանքով, ինչն ավելի ուշ հաստատվեց:**

Մարտի 23-ի դրությամբ հիվանդներից 12-ի վիճակը բավարար էր. նրանք դուրս են գրվել հիվանդանոցից եւ շարունակում են բուժում ստանալ տնային պայմաններում: Մյուսները բուժվում են Կապանի հիվանդանոցում՝ ստացիոնար պայմաններում:

Հիվանդները, ինչպես հավաստեց «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն Սմբատ Օրբելյանը, բժիշկների համակ ուշադրության կենտրոնում են, ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումները նրանց մոտ բրուցելյոզի խրոնիկականությունը բացառելու համար:

Իսկ ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական տեսչության Սյունիքի մարզային կենտրոնի պետ Լենա Մալինցյանի հավաստմամբ՝ ներկայումս սպանդանոցի մորթման արտադրամասի մյուս աշխատակիցներն ու նրանց ընտանիքի անդամները եւս (մորթման արտադրամասն ունի 47 աշխատակից) պատշաճ հե-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6



Սերգո Կարապետյան, ՀՀ գյուղատնտեսության նախարար

# Համայնքների խոշորացման ծրագրի գործնական մեկնարկը տրված է

Ռեֆորմ

**ՀՀ կառավարության մարտի 19-ի նիստում մեկնարկ տրվեց համայնքների խոշորացման ծրագրին:**

Տեղեկացնենք, որ ՀՀ կառավարությունը դեռեւս 2011թ. նոյեմբերի 10-ին հավանություն է տվել համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման հայեցակարգին:

Մինչ ծրագրի ամբողջական իրականացումը, 2015թ. կիրականացվի պիլոտային երեք ծրագիր՝ Լոռու մարզի Թումանյան, Սյունիքի մարզի Տաթեւ, Տավուշի մարզի Դիլիջան համայնքային փնջերում:

Սյունիքի մարզում առաջարկվում է միավորել Շինուհայր, Տաթեւ, Հալիձոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքները՝ Տաթեւ համայնք անվամբ ու Շինուհայր համայնքային կենտրոնով:

Այդ նպատակով 2015թ. մայիսի 17-ին նշանակվել է տեղական հանրաքվե՝ հանրաքվեի դնելով հետեւյալ հարցը՝ **«Համաձա՞յն եք, որպեսզի Շինուհայր, Տաթեւ, Հալիձոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքները միավորվեն՝ Տաթեւ համայնք**



Երեւան, ՀՀ կառավարության շենքը

**անվամբ, Շինուհայր համայնքի կենտրոնով»:**

ՀՀ կառավարությունը նույն օրվա նիստում ընդունել է նաեւ որոշումներ՝ տեղական հանրաքվեների նախապատրաստման եւ անցկացման ծախսերը ֆինանսավորելու վերաբերյալ:

Խոշորացման համար Սյունիքի մարզում ընդգրկվել է նաեւ երեք համայնքային փունջ: Դրանք են՝ Սառնակունք (Սառնակունք, Ծղուկ, Գորայք, Սպանդարյան), Գորիս (Գորիս, Ակներ, Վերիշեն, Քարահունջ), Մեղրի (Մեղրի, Ագարակ, Ալվանք, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճեւան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն):

Այդ համայնքներում տեղական հանրաքվեների անցկացման հարցը կքննարկվի լրացուցիչ:

Բազմաթիվ ռիսկեր պարունակող այդ փորձարկումը, ըստ էության, կոչված է վերջ տալու լեռնային գյուղերին համակած հոգեվարքին: Եթե այդ ամենից հետո շարունակվի գյուղերի քայքայումը, ապա կնշանակի, որ մենք հերթական անգամ մեծագույն մեղք ենք գործել հազարամյակներով ձեւավորված ու փրկություն աղերսող գյուղերի հանդեպ:

Եվ այդ ամենի պատասխանը կիմանանք ժամանակի ընթացքում, թեեւ այժմ կառավարության միջամտության կարիքը գուցե եւ չզգացվի՝ ուշացած լինելու պատճառով:

**«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»**

# Փորձել է պետական բյուջեից թաքցնել 3,8 մլրդ դրամ, եւ հավանաբար... վասն Վարդան Մամիկոնյանի ու Գարեգին Նժդեհի

Մարտի 12-ին հանրապետության հարկային դաշտում տեղի ունեցավ բացահայտումների բում, որն առայսօր շարունակում է մնալ հանրության ուշադրության կենտրոնում:



ՀՀ ֆինանսների նախարարության խոշոր հարկ վճարողների վարչության պետ Ռաֆիկ Մաշադյանը լրագրողներին ներկայացրեց մի շարք ընկերությունների ու կազմակերպությունների անուններ, որոնք էական խախտումներ են թույլ տվել, իսկ ավելի ճիշտ՝ անկեղծ չեն գտնվել Հայաստանի պետական բյուջեի հետ հարաբերություններում:

Անբարեխիղճ հարկատուների ցանկում նշվեց նաեւ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ի անունը: Այդ ընկերությունում արձանագրվել էր 3,8 մլրդ դրամի լրացուցիչ պարտավորություն, որը փորձել են թաքցնել պետական բյուջեից:

Դրանից հետո, հակառակ մեր սպասումների, հանրությանը որեւէ բացատրություն չի տվել ընկերության ղեկավարի աթոռը զբաղեցնող անձը՝ Հրաչ Ջաբրայանը:

Հակված ենք կարծելու, որ դա Հայաստանի պետական բյուջեից թաքցրած 3 մլրդ 809 մլն դրամն է, որ հայտնաբերվել է 2014թ. հոկտեմբերի 1-10-ն ընկած ժամանակահատվածում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կատարած ստուգումների արդյունքում:

Դեռեւս 2014-ի հոկտեմբերին Հրաչն ու նրա օգնականները տարակուսանք հայտնեցին ստուգման արդյունքների վերաբերյալ: Նաեւ հաթաթա տվեցին, թե դատարան են գնալու եւ բողոքարկելու են հարկայինի ներկայացրած ակտը, ապացուցելու են իրենց արդարությունը…

Վեց ամիս է անցել, բայց Հրաչը որեւէ բացատրություն կամ պարզաբանում չի տվել խոստացած դատական գործընթացի մասին: Չի բացառվում, որ գործն ընդհանրապես դատարան չի մտել:

Գլխավորը, սակայն, դա չէ, այլ այն, որ Հայաստանի իրավապահ ու ֆինանսական մարմիններն այդպես էլ չեն պատասխանել պարզագույն, բայց եւ առանցքային հարցին՝ ինչպե՞ս եւ ո՞ւմ մեղքով է ստացվել, որ Կապանի լեռնահանքային կոմբինատը փորձել է պետական բյուջեից թաքցնել մոտ 9 մլն դոլարին համարժեք դրամ, որը մեր երկրի համար այնքան էլ փոքր գումար չէ: Մանավանդ որ, ըստ մեր ունեցած տեղեկությունների, թաքցրած 3,8 մլրդ դրամն արդեն իսկ վերադարձվել է պետական գանձարան:

**Հ.Գ.** Ռաֆիկ Մաշադյանի հայտարարությունն արդեն հրապարակի վրա էր, երբ իմացանք, որ պետական բյուջեից հարկեր թաքցնող Հրաչը ծրագրում է ապրիլի 11-ին Կապանում կազմակերպել «ընկերության պաշտոնական ընթրիք»: Եվ այդ նպատակով «բիրիքով» հրավիրատոմսեր է առաքում մարզկենտրոնի դպրոցներ ու նախադպրոցական հաստատություններ: Ըստ էության խնդիր է դրված հերթական անգամ՝ դպրոցների ու նախադպրոցական հաստատությունների հաշվին, ցուցանել, որ Կապանը համախմբված է Հրաչի շուրջ, որ նա մարզկենտրոնում որոշակի հեղինակություն է վայելում, ինչը, բնականաբար, շուլուխի պես մի բան է…

Ի դեպ, դեռեւս ս.թ. փետրվարի 4-ին էր Հրաչը հայտարարել՝ **«Խնդրեմ Ապրիլ 11 նկատի ունենալ որպես գրավված օր»** (ակնհայտ անգրագետ այդ արտահայտությանն անդրադարձել ենք «Սյունյաց երկրի» 2015թ. փետրվարի 19-ի համարում): Ըստ երեւույթին հենց այդ ճաշկերույթն է նկատի ունեցել:

Անկեղծ լինենք՝ այնքան էլ պատշաճ չէ մեր ազգային ողբերգության 100-ամյակն աշխարհի մասշտաբով հիշատակելու օրերին պաշտոնական ճաշկերույթի կազմակերպումը, բայց արժեքային համակարգի խնդիր է. Հրաչն այդպես է պատկերացնում զոհերի հիշատակի ոգեկոչումը:

Գլուխը քարը՝ թող այդպես էլ պատկերացնի ու թող ճաշկերույթով էլ ոգեկոչի զոհերի հիշատակը: Բայց ինչո՞ւ ճաշկերույթին հրավիրել դպրոցների ու նախակրթարանների աշխատակիցներին: Ինչո՞ւ հանքարդյունաբերական ձեռնարկության տնօրենության կազմակերպած ընթրիքին, եթե իսկապես անկեղծ մղումով է կազմակերպվում, գլխավորապես չհրավիրել հարյուրավոր հանքագործներին, ովքեր ստորգետնյա պայմաններում կամ հարստացուցիչ ֆաբրիկայում են աշխատում:

Մի ուրիշ՝ առավել կարեւոր հարց եւս, որ այս օրերին քննարկվում է հանքագործների շրջանում: Եթե Հրաչն ի վիճակի է ձեռնարկության միջոցներով ճաշկերույթներ կամ «Սուրբ Վալանդինի տոն» կազմակերպել, ապա ինչու այդ միջոցներով, գոնե մասամբ, չի վճարում այն մարդկանց հասանելիքը, ովքեր իրենց վաստակած գումարը ստանալու համար դիմել եւ դիմում են դատարան: Եվ գիտե՞ք, թե քանի դատական հայց է ընդունվել ու քննվել (քննվում) միայն Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ Հրաչի կառավարման վերջին երեք տարում: 20 հայց՝ 2012 թվականին, 43 հայց՝ 2013 թվականին, 46 հայց՝ 2014 թվականին, 4 հայց՝ դեռեւս նոր-նոր մեկնարկած 2015-ին…

Մենք, անշուշտ, ժամանակ կգտնենք եւ կպարզենք, թե մոտ 100-ի հասնող հայցի հետեւում քանի հանքագործ կա կանգնած եւ խոսքը որքան գումար մասին է եղել ու է: Բայց երբ մարդ 2015թ. ապրիլի 24-ը դիմավորում է «Հայոց ցեղասպանության 100-ամյակին՝ 100 դատական գործ» կատարողականով, ապա նրա ձեռքի հացը չի ուտվի, եթե մենք իրոք հայ ենք ու քրիստոնյա…

Հրաչիկյան ընթրիքը մի դեպքում արդարացում կունենա… Եթե նա այդ օրը, ձեռքը սեղանին մեկնելուց առաջ, ներկաներին հաշվետվություն տա, թե ինչու եւ ինչպես 3,8 մլրդ դրամը թաքցրեց մեր երկրի՝ ոչ այնքան բարվոք վիճակում գտնվող պետական բյուջեից: Եթե նա բացատրություն տա, թե ինչու է հարյուրավոր կապանցի հանքագործների (իրենց արդար վաստակը ստանալու համար) ստիպում գնալ դատարան:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «... Մեր սահմանին կանգնած հայ երիտասարդը գիտակցում է, որ իրեն փորձում են ոչնչացնել ռուսական զենքով»



Սերժ Սարգսյանը «Արարատի ստորոտին» միջազգային մեդիա համաժողովում (մարտի 18-ին) խոսել է մի շարք հարցերի մասին: Պատասխանելով ռուս լրագրողի հարցին, թե ի տարբերություն Ադրբեջանի՝ Հայաստանը, լինելով ՌԴ-ի դաշնակից երկիր, ինչպե՞ս է վերաբերում նրան, որ Ռուսաստանը զենք է վաճառում ԼՂ հակամարտության կողմերին, Սերժ Սարգսյանը հայտարարել է, թե այդ խնդիրը պետք է լուծում ստանա: **«Այս ընթացքում, ՀՀ ԶՈՒ ստեղծումից ի վեր, մենք որեւէ այլ երկրից չենք ստացել Ռուսաստանից ստացած օժանդակության նույնիսկ մեկ տոկոսը, այնպես որ՝ երախտապարտ ենք եւ շնորհակալ մեր դաշնակցին՝ մեզ օժանդակելու համար: Բայց ինչպես հայերն են ասում՝ բոլոր երնեկները մի տեղ չեն լինում, ուստի այս հարաբերություններում մեզ անհանգստացնում է, որ ՌԴ-ն, ելնելով տարբեր դրդապատճառներից, սպառազինություն է վաճառում Ադրբեջանին, եւ այստեղ խնդիրը սպառազինության որակը չէ, խնդիրն այն է, որ մեր սահմանին կանգնած հայ երիտասարդը գիտակցում է, որ իրեն փորձում են ոչնչացնել ռուսական զենքով: Սա է ամենաբարդ հանգամանքը, եւ սա է, որ կարող է վատ ազդեցություն ունենալ մեր հարաբերությունների վրա, որովհետեւ տեւական ժամանակ՝ 250 տարվա ընթացքում, հայերը եւ ռուսներն ապրել են կողք կողքի, ունեցել են ընդհանուր հակառակորդներ, թշնամիներ, եւ իրենց երկրում արտադրված զենքերից իրար վրա չեն կրակել: Սա խնդիր է, որը պետք է լուծում ստանա»:** Նա հայտարարել է նաեւ, որ այսօր Ադրբեջանը չունի այն ռազմական հնարավորությունը, որ նրան թույլ կտա խնդիրը լուծել ռազմական ճանապարհով՝ չնայած, որ հսկայական միջոցներ է ծախսում զենքի եւ զինամթերքի վրա:

**www.armtimes.com**

## Նապոլեոն Օհանյանը՝ 2014թ. լավագույն դատավոր,

իսկ մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ լավագույն դատարան

**Շնորհավորում ենք**

**Մարտի 5-ին ՀՀ դատավորների ընդհանուր ժողովն ընտրել է 2014 թվականի լավագույն դատավորներին ու դատարանները:**



Հիշեցնենք, որ «Տարվա լավագույն դատավոր» եւ «Տարվա լավագույն դատարան» մրցանակները սահմանվել են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի 2009 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ եւ շնորհվում են յուրաքանչյուր տարի:

2014 թվականի լավագույն դատավորների եւ դատարանների ընտրության նպատակով ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 2015 թվականի փետրվարի 24-ի թիվ 10Լ որոշմամբ ձեւավորել է հանձնաժողով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գլխավորությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են ՀՀ վճռաբեկ դատարանի պալատների նախագահները եւ վերաքննիչ դատարանների նախագահները: Հանձնաժողովը պետք է կատարեր համապատասխան ուսումնասիրություններ եւ ներկայացներ եզրակացություն հարցի վերաբերյալ: Հանձնաժողովը սահմանել է «Տարվա լավագույն դատավոր» եւ «Տարվա լավագույն դատարան» անվանակարգերում թեկնածուների որոշման հիմնական չափորոշիչները, դրանք են՝

1. քննվող գործերի քանակը,
2. բողոքարկված եւ բեկանված կամ փոփոխված գործերի քանակը,
3. գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը,
4. դատավորների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, սեմինարներին եւ այլ միջոցառումներին,
5. կարգապահությունը,
6. դատավորի դեմ ներկայացված հիմնավոր դիմում-բողոքները,
7. դատավորի մասին մամուլի հիմնավորված հրապարակումները,
8. ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական եւ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովներում վարույթների հարուցումը եւ դրանց ընթացքը,
9. դատավորի վարքագիծը եւ հեղինակությունը,
10. կոլեկտիվի վերաբերմունքը դատավորի նկատմամբ:

Վերոնշյալ չափանիշների հիման վրա՝ 2014 թվականի լավագույն դատավոր է ճանաչվել նաեւ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նապոլեոն Օհանյանը:

Ի դեպ, Նապոլեոն Օհանյանը «Տարվա լավագույն դատավոր» է ճանաչվել նաեւ 2011թ.:

«Տարվա լավագույն դատարան» է ճանաչվել նաեւ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը:

**Սեփ. լրատվություն**

## Տեղական ինքնակառավարում



# Կյանքը Հայաստանի հանքարդյունաբերության կենտրոնավայր Քաջարանում

Հարցազրույց Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանի հետ

Վերջին ամիսներին Քաջարան քաղաքում որոշակի փոփոխություններ եւ իրադարձություններ տեղի ունեցան: Դրանք պայմանավորված էին, նախեւառաջ, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի ղեկավարության, ինչպես եւ Սյունիքի մարզպետի փոփոխությամբ: Ի հայտ եկան նաեւ նոր երեւույթներ, նոր միտումներ սոցիալ-տնտեսական կյանքում: Այդ ամենի համապատկերի վրա, անշուշտ, հետաքրքիր է իմանալ, թե ինչպիսի ընթացք է ապրում համայնքային կյանքը Հայաստանի հանքարդյունաբերության կենտրոնավայր Քաջարան քաղաքում, ինչի համար էլ զրուցեցինք քաղաքապետ Վարդան Գեւորգյանի հետ՝ ակնկալելով անկեղծ ու անկաշկանդ խոսակցություն, ինչով, ի դեպ, աչքի են ընկել նրա հետ ունեցած մեր նախորդ զրույցները:

**– Պարո՛ն Գեւորգյան, վաղուց է՝ չեք հանդիպում «Սյունյաց երկրի» ընթերցողների հետ: Վերջին անգամ, եթե չենք սխալվում, մեր թերթին հարցազրույց տվեցիք երեք տարի առաջ: Հետաքրքիր է, ի՞նչ նորություններ, փոփոխություններ կան Ձեր կյանքում, նաեւ՝ անձնական կյանքում: Մի խոսքով՝ ինչպե՞ս եք:**

– Այո՛, վերջին անգամ մեր հանդիպումը եղել է երեք տարի առաջ՝ անհատական զրույցի տեսքով: Թեեւ թերթի յուրաքանչյուր համարում լինում են անդրադարձներ Քաջարան քաղաքի տարբեր ոլորտներին, ինչպես նաեւ քաղաքապետին ու քաղաքապետարանի գործունեությանն առնչվող: Այդ լուսաբանումների շնորհիվ էլ ավելի ճանաչելի է դարձել լեռնագործների քաղաքը, եղել են բազմաթիվ ձեռքբերումներ, ինչում մեծ դերակատարում ունի նաեւ «Սյունյաց երկիր» թերթը: Այնպես որ մշտապես զգում ենք Ձեր ուշադրությունը: Անձամբ ես Ձեր թերթի մշտական ընթերցողն եմ:

Եվ ուրեմն՝ թույլ տվեք ողջունել «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմին, բոլոր ընթերցողներին:

Շնորհակալություն հարցազրույցի հրավիրելու համար:

Ի դեպ, «Սյունյաց երկիր»-ը միակ պարբերականն է, որ անվարան ու առանց երկնչելու ներկայացնում է տարբեր ոլորտներին առնչվող հիմնախնդիրներ, հարցեր, ճշտումներ, օբյեկտիվ եւ, ինչու չէ, նաեւ սուբյեկտիվ կարծիքներ, այդ թվում՝ իմ մասին:

Դրանք հաճախ օգնում են շատերին՝ շտկելու եւ էլ ավելի ամբողջական ու նպատակասլաց դարձնելու իրենց աշխատանքը:

Հասարակության տեսադաշտում գտնվելու մասսայական լավագույն միջոցներից են մամուլն ու հեռուստատեսությունը: Թերթից ու էկրանից մարդու գործունեությունն ավելի խոր տպավորություն է թողնում, գնահատանքի արժանանում: Եվ ավելի քան մեկ տասնամյակից ավելի է, ինչ «Սյունյաց երկիր»-ը ստանձնել է այդ առաքելությունը: Համոզված եմ՝ միայն ուժեղներին է կյանքում վիճակված լինել անաչառ, անկաշառ ու անդավաճան՝ իրենց նպատակների իրականացման ճանապարհին: Իսկ Ձեր նպատակը գիտեմ՝ հանունի է, հանուն մարդու, հանուն մարզի ու հանուն պետության: Ձեր հատուկ համարները նույնիսկ ալմանախներ են, որոնք ընթերցողը հաստատ տեղադրում է գրադարակում:

Ինչ վերաբերում է իմ անձնական կյանքին, ասեմ՝ նշանվել է ավագ դուստրս, եւ ես ստացել եմ աներոջ թեկնածուի կարգավիճակ:

**– Քաջարանի կոմբինատն ունեցավ նոր ղեկավարություն, Սյունիքում մարզպետի փոփոխություն տեղի ունեցավ... Դրանք, բնականաբար, չէին կարող անդրադարձ չունենալ Քաջարանի քաղաքապետարանի գործունեության, նախկինում որդեգրած քաղաքականության, ինչպես եւ ծրագրերի վրա: Այլ հարց է, թե որքանով էր շոշափելի անդրադարձը:**

– Հիշեցի հայտնի թեզը՝ անհատները պատմության մեջ որոշիչ դեր չեն խաղում, նրանք արագացնում կամ դանդաղեցնում են պատմության ընթացքը: Իհարկե, դա պատմությանն է վերաբերում, սակայն, երբ հարցն առնչվում է կառույցին, հաստատությանը, կազմակերպությանը, այլ է մոտեցումը. անհատներն ու անհատականություններն են հաճախ որոշել բազմաթիվ ճակատագրեր, մեծ ու փոքր խնդիրների հանգուցալուծումներ: Ուժեղ անհատը հաջող գործի գրավականն է:

Քաջարանի կոմբինատը վեց տասնամյակից ավելի տարեգրություն ունի եւ իր այդ ընթացքի մեջ միշտ էլ արարումի ու ստեղծագործական վերելքի մեջ է եղել: Դա աշխատավորական կոլեկտիվի՝ ձեռնարկությանը բացարձակ նվիրվածության արդյունքն է: Այդպես էր երեկ, այդպես է այսօր, այդպես կլինի վաղը եւ ընդմիշտ:

Փառք Աստծո, կոմբինատը միշտ ղեկավարել են հմուտ, գործիմաց, առաքինի, հայրենասեր, տաղանդաշատ անհատներ: Նրանցից յուրաքանչյուրն իր ժամանակի հերոսն է:

Իհարկե, յուրաքանչյուր փոփոխություն չէ, որ դրական արդյունք է խոստանում: Այս դեպքում ասեմ, որ ամեն ինչ սահուն եւ բնականոն ընթացքի մեջ է: Թե՛ քաղաքի եւ թե՛ քաղաքապետարանի գործունեության, մտահղացումների, ծրագրերի իրագործման առումով ամեն ինչ դրական հունի մեջ է:

Ինչ վերաբերում է մարզպետի փոփոխությանը... Տասնամյա գործունեության կարճատեւ դադարից հետո Սուրեն Խաչատրյանը նորից ստանձնել է Սյունիքի մարզպետի պաշտոնը: Անկասկած, մեր աշխատանքների կազմակերպման մեջ անհրաժեշտ է համագործակցություն հմուտ, փորձառու, հայրենասեր, գործունյա, ծառայելու եռանդով լեցուն անհատի հետ, ինչը եւ առկա է: Կարճատեւ բացակայության արդյունքում չեն պակասել նրա եռանդն ու ծառայելու պատրաստակամությունը:

Այդ փոփոխությունները, բնականաբար, նոր եւ թարմ ռիթմ են հաղորդել մեր աշխատանքներին:

**– Այդ ամենին դեռ կանդրադառնանք: Բայց կա մի հարց, որ մտահոգում է ոչ միայն քաջարանցիներին: Խոսքը Քաջարանի հիվանդանոցում ստեղծված վիճակի եւ հեպատիտ C-ի, այդ առիթով հարուցված քրեական գործի մասին է: Եվ կուզենայինք իմանալ՝ արդյո՞ք տեսանելի է այդ պատմության ավարտը՝ հիվանդանոցը բնականոն հուն վերադարձնելու հեռանկարը:**

– Իհարկե, ե՛ւ երեւույթը, ե՛ւ ստեղծված վիճակն անընդունելի են ու անհասկանալի: Իրականացվել են ահռելի ֆինանսական ներդրումներ, ձեռք բերվել ժամանակակից սարքավորումներ ու միջոցներ: Մարդիկ հաստատություն են դիմել՝ բուժում ստանալու ակնկալիքով, սակայն արդյունքում նոր խնդիր են ձեռք բերել: Բարեբախտաբար, ժամանակին հայտնաբերվել ու կանխարգելիչ միջոցառումներ են ձեռնարկվել: Այս առումով գնահատանքի են արժանի Սյունիքի մարզպետի, ՀՀ առողջապահության նախարարության հանձնաժողովի, «ԶՊՄԿ» ՓԲԸ տնօրենության սրտացավ վերաբերմունքն ու օպերատիվ գործելաոճը: Վիրուսով վարակված հիվանդները գտնվում են ուշադրության կենտրոնում եւ հոգածության ներքո:

Ինչ վերաբերում է տեղի ունեցածի պատճառին, ապա հարուցված քրեական գործի շրջանակում իրականացվող նախաքննությունից հետո կիմանանք այդ մասին:

Իսկ հիմա իրավիճակը Քաջարանի բժշկական կենտրոնում կարելի է գնահատել կայուն: Նշանակվել է կենտրոնի տնօրենի պաշտոնակատար, ունենք փորձառու, հմուտ բժիշկներ ու բուժաշխատողներ, հրավիրվել են նոր մասնագետներ՝ ընդհանուր վիրաբույժ, անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ: Այնպես որ Քաջարանի բժշկական կենտրոնն ունի բարձրակարգ բժշկական սպասարկում իրականացնելու բոլոր հնարավորությունները:

**– Քաջարան քաղաքի 2015թ. բյուջեն. փորձենք հիմնական ցուցանիշները համեմատել 2014-ի բյուջեի հետ: Եվ, իհարկե, մեզ հետաքրքրում է հարցը՝ բնապահպանական վճարներից (իբրեւ լեռնահանքային արդյունաբերության ազդակիր համայնք) 2013-ին, 2014-ին Քաջարան քաղաքին գումար հատկացվե՞ց, թե՞ ոչ: Այդ առումով ի՞նչ սպասելիքներ ունեք 2015-ին:**

– 2015թ. համայնքային բյուջեն 243մլն դրամ է՝ 2014-ի 227մլն դրամի փոխարեն: 2015թ. համայնքային բյուջեում սեփական եկամուտը կլինի 172մլն դրամ՝ 2014-ի 105մլն-ի դիմաց: Սեփական եկամուտների աճը պայմանավորված է գույքահարկի բազայի ընդլայնմամբ:

Բացի դրանից՝ կոմբինատի եւ քաղաքապետարանի միջեւ կնքվել է պայմանագիր, ըստ որի՝ ամսական 10մլն դրամ կհատկացվի քաղաքային համայնքին:

Ինչ վերաբերում է բնապահպանական վճարներին, ապա, ըստ մեր ներկայացրած ծրագրերի՝ վերջին երեք տարում համայնքին բնապահպանական վճարներից հատկացում է կատարվել՝ 2013-ին՝ 17.5մլն դրամ, 2014-ին՝ 14մլն դրամ, 2015-ին՝ 5.2մլն դրամ:

**– Համայնքային բյուջեները (այդ թվում՝ քաղաքային համայնքներինը) դարձել են, ըստ էության, զուտ աշխատավարձեր վճարող, աշխատակազմերի առօրյայի սպասարկումն ապահովող բյուջեներ: Սյունիքում գրեթե լուրջ օրինակներ չունենք, երբ համայնքային բյուջեով տվյալ համայնքի համար ինչ-որ էական հարց է լուծվում: Շատ կուզենայինք, որ Քաջարան քաղաքի օրինակով Դուք հակասեիք մեզ:**

– Հարցը բավականին հետաքրքիր է, կփորձեմ պատասխանել. չգիտեմ՝ որտեղ եւ ինչպես են տնօրինվում համայնքային բյուջեները, բայց նաեւ հասկանանք, որ համայնքի ղեկավարն ունի գործառույթներ, որոնք ամրագրված են ՏԻՄ մասին օրենքով, եւ անհրաժեշտ է կյանքի կոչել դրանք՝ պետության կողմից պատվիրակված, պարտադիր, կամավոր լիազորություններ եւ, ինչու չէ, նաեւ սեփական նախաձեռնություններ:

Ինչպիսին է այս առումով իրավիճակը Քաջարանում. նախ՝ Քաջարանի քաղաքային համայնքն ունի բավականին լուրջ սեփականություն,

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

**ԱՅՑԵՔԱՐՏ**

*ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ. ծնվել է 1963թ. մարտի 13-ին Կապանի շրջանի Լեռնաձոր գյուղում՝ ուսուցչի ընտանիքում:*
*1980թ. Քաջարանի N2 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնամետալուրգիական ֆակուլտետի «Օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման տեխնոլոգիա եւ տեխնիկա» բաժինը, որն էլ ավարտել է 1985թ.:*
*Այնուհետեւ աշխատանքի է անցել Զանգեզուրի ՊՄԿ-ի լեռնային արտադրամասում՝ էքսկավատորավարի օգնական, ապա՝ նույն արտադրամասի հերթափոխի պետ:*
*1989թ. հոկտեմբերին ընտրվել է կոմբինատի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, 1991-ին՝ Հայաստանի երիտասարդական միության Քաջարանի քաղխորհրդի նախագահ:*
*1992-95թթ. ծառայել է ՀՀ ազգային բանակում, մասնակցել հանրապետության սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողություններին:*
*1995թ. ապրիլի 1-ին նշանակվել է Զանգեզուրի ՊՄԿ-ի լեռնային արտադրամասի ստորգետնյա հանքուղու պետի տեղակալ, ապա՝ պետ:*
*1996-2002թթ. եղել է կոմբինատի արհկոմի նախագահ:*
*2002 թվականից Քաջարան քաղաքային համայնքի ղեկավարն է:*
*1983-85թթ. սովորել է Հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում եւ ստացել ժուռնալիստի մասնագիտություն:*
*Երկրապահ կամավորականների միության անդամ է:*
*1997-ից ՀՀԿ Քաջարանի տարածքային կազմակերպության նախագահն է:*
*Պարգեւատրվել է մի շարք մեդալներով:*
*Ամուսնացած է, ունի երկու դուստր եւ որդի:*

*Տեղական ինքնակառավարում*

# Կյանքը Հայաստանի հանքարդյունաբերության կենտրոնավայր Քաջարանում

Հարցազրույց Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանի հետ

ՍԿԻԶԲԸ` ԷՋ 3

այն է` կրթական, մարզական, մշակութային, սպասարկման ոլորտի հաստատություններ, տեխնիկական միջոցներ: Սրանց շահագործումն ու պահպանությունն ինքնին ծախսեր են: Ի դեպ, համայնքում ջրամատակարարումը եւ ջրահեռացումը համայնքի իրավասության շրջանակներում են եւ իրականացվում են համայնքային սեփականություն հանդիսացող կազմակերպության կողմից:

Երկրորդ. համայնքի կողմից պատշաճ ու բարձր մակարդակով իրականացվում են գրեթե բոլոր միջոցառումները, որոնք նույնպես ֆինանսավորվում են բյուջեի միջոցներով: Համայնքի բյուջեի հաշվին իրականացվում են նաեւ զգալի սոցիալական ծրագրեր:

Հանրակրթական դպրոցներում «Քաջարան. բնություն եւ էկոլոգիա» առարկայի դասավանդումն ավելի նպատակային ու արդյունավետ դարձնելու համար ձեռք են բերվում դիդակտիկ ու նյութական այլ արժեքներ, սրանք նույնպես իրականացվում են բյուջեի միջոցների հաշվին: Այս ամենն իրականացնելու նպատակով անհրաժեշտ են նաեւ աշխատակիցներ, հմուտ կադրեր, որոնց պետք է եւ ըստ արժանվույն վարձատրել, նաեւ մասնագիտորեն ավելի հմտանալու հնարավորություն ընձեռել: Չմոռանանք, որ քաղաքապետարանը նաեւ սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իշխանությունն է համայնքում, նրա ներկայացուցչական մարմինն է եւ այս առումով ունի հատուկ գործառույթներ, գործողությունների հստակ պլան, որոնք պետք է անպայման իրականացնել ու ֆինանսավորել:

Ներկայացնեմ իրականացված որոշ ծախսեր. քաղաքի փողոցային լուսավորության համակարգի պահպանում եւ անխափան շահագործում, համայնքի փողոցների եւ ճանապարհների սանիտարական մաքրություն, կանաչապատ գոտիների, պուրակների, այգիների խնամք, մարզական եւ մշակութային միջոցառումների իրականացում, քաղաքապետարանի եւ համայնքային կառույցների գործունեության բարելավում:

Պատկերն ավելի տպավորիչ դարձնելու համար բերեմ թվային մի քանի օրինակ. 2009-2013թթ. Քաջարանի շրջակա միջավայրի եւ բնակչության առողջության պահպանման ծրագրերով իրականացված միջոցառումների համար բյուջեից տրամադրել ենք 117.1 մլն դրամ, որից` ջրցան մեքենայի ձեռքբերում` 14մլն, հիվանդանոցի հիվանդասենյակների ու սանհանգույցների վերանորոգում` 6մլն, համայնքի մանկապարտեզի շենքի էներգաարդյունավետության եւ էներգախնայողության բարձրացում` արեւային ջրատաքացուցչի կիրառմամբ` 21.6մլն, Քաջարանի N1 եւ N2 միջնակարգ դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների ստեղծում, գույքի եւ սարքավորումների ձեռքբերում` 20 մլն, Քաջարանի քաղաքային համայնքի կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում` 8.5մլն, համայնքային մանկապարտեզի բակի հիմնանորոգում, կանաչ պլանավորում` 14մլն, «Քաջարանի եւ նրա շրջակայքի բուսաշխարհը» գրքի կազմում եւ հրատարակում` 3մլն, Քաջարանի բժշկական կենտրոնի համար սարքավորումների ձեռքբերում` 8.7մլն եւ այլն:

2014թ. համայնքային բյուջեից Քաջարանի բժշկական կենտրոնի համար բժշկական սարքավորման ձեռքբերման համար տրամադրվել է 3մլն դրամ, Խանջյան 6 եւ 8 շենքերին հարող տարածքում պուրակի կառուցման աշխատանքների ավարտի, Տերյան եւ Գետափնյա փողոցների միջեւ գտնվող տարածքի կանաչ պլանավորման աշխատանքների մեկնարկի համար` 4մլն, ուսումնական սարքերի եւ սարքավորումների ձեռքբերում դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների համար` 2մլն: 2015թ. բյուջեով նախատեսվում է կանաչապատ տարածքների վերականգնման եւ ընդլայնման համար` 1.4մլն, էկոլոգիական կրթության զարգացման համար` 2մլն, բժշկական կենտրոնի աշխատակիցների վերապատրաստման համար` 600 հազար դրամ:

**– Քաջարան քաղաքը եւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը երկվորյակներ են, իսկ ավելի ճիշտ` մեկ օրգանիզմ` հիմնադրման օրերից: Տասնամյակներ շարունակ կոմբինատը սոցիալ-տնտեսական բնույթի ծրագրեր է իրականացրել համայնքում: Հետաքրքիր է` 2014-ին կոմբինատն ի՞նչ ուշագրավ ծրագրեր իրականացրեց քաղաքում (նաեւ` դրամական արտահայտությամբ), ի՞նչ ծրագրեր ունի 2015թ. համար:**

**Եվ ընդհանրապես, ինչպիսի՞ն են քաղաքապետարան-կոմբինատ հարաբերությունները ներկայումս:**

– Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը քաղաքաստեղծ ձեռնարկություն է: Քաջարան քաղաքի, մերձակա գյուղական համայնքների, շատ առումով նաեւ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական, մարզական եւ այլ բնագավառների զարգացման բոլոր հեռանկարները միշտ եղել եւ մնում են կոմբինատի տնօրենության ուշադրության ներքո:

Այսօր, առավել եւս, երբ համայնքային տնտեսության կազմակերպման լիարժեք գործունեություն իրականացնելու համար ոչ բավարար են ֆինանսական հնարավորությունները, կոմբինատը նշածս համայնքներին եւ, մասնավորապես, մեր համայնքին տրամադրում է անհրաժեշտ բոլոր միջոցները` աշխատանքները կազմակերպելու համար: Իսկ ընդհանրապես, քաղաքապետարան-կոմբինատ հարաբերությունները բարձր մակարդակի վրա են` հիմնված փոխադարձ հարգանքի ու վստահության վրա:

2014թ. կոմբինատի կողմից ֆինանսավորվել են ամառային բակային ճամբարները, քաղաքի օրվա եւ Ամանորի տոնակատարությունների հետ կապված բոլոր միջոցառումները:

Կոմբինատի աջակցությամբ հիմնանորոգվել է N1 միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգը: Օժանդակություն է ցույց տրվել հանրապետական, մարզային միջոցառումներին քաղաքի մասնակցությանը:

Այս ամենը բավականին խոշոր ֆինանսական միջոցներ է պահանջում, որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունն ու շնորհակալությունը:

**– Մեզ շատ են զանգահարում եւ գրում «Քաջարան» հիմնադրամին առնչվող հարցերով: Կարծիքներն էլ միանշանակ չեն. ոմանք ասում են` դա հայտնի կլանի ոչ անհայտ կարդինալի փողերի լվացման հերթական օղակն էր, ոմանք էլ` թե դա շատ լավ կառույց էր, օգտակար էր քաղաքին, ինչպես եւ մերձակա գյուղերին:**

**Կուզենայինք իմանալ նաեւ հիմնադրամի 2014թ. կատարած աշխատանքների ու 2015թ. անելիքների մասին` համառոտ:**

– «Քաջարան» բարեգործական հիմնադրամի ստեղծումն ինքնանպատակ չէր: Այն ստեղծվեց մեր հասարակության զարգացման այնպիսի մի փուլում, երբ դրա անհրաժեշտությունն իսկապես կար: Հիմնադրամը ստեղծվեց կոմբինատի այն ժամանակվա տնօրեն Մաքսիմ Հակոբյանի նախաձեռնությամբ 1998-99 թվականներին, որի հիմնական առաքելությունն էր հավելյալ ֆինանսական միջոցներով վերականգնել ծայրաստիճան քայքայված համայնքային տնտեսությունը: Կարծում եմ` հիմնադրամը բարձր պատասխանատվությամբ եւ փառքով կատարեց իր առջեւ դրված խնդիրը` կրթական, նախադպրոցական, մարզական, մշակութային, կենցաղային սպասարկման, հանգստի կազմակերպման կառույցների, բազմաբնակարան շենքերի տանիքների, շքամուտքերի, աստիճանավանդակների հիմնանորոգում եւ արդիականացում, հիմնահատակ ավերված վերելակային տնտեսության վերականգնում եւ վերազինում: Այդ ամենը տրամադրված ահռելի գումարների, մարդկային ջերմ վերաբերմունքի, անշահախնդիր նվիրվածության շնորհիվ է իրականացվել: Վստահաբար կարող եմ ասել, որ հիմնադրամի կողմից իրականացված աշխատանքների ընթացքում ոչ ոք այլ ակնկալիքներ չի ունեցել, ընդհակառակը, արվել է անհրաժեշտ ամեն ինչ` յուրաքանչյուր դրամը նպատակին ծառայեցնելու համար: Այլ խնդիր է, որ հիմնադրամի աշխատանքներում սեփական նախաձեռնությամբ ընդգրկված շինարարական կազմակերպությունների համար միջնորդել ենք կոմբինատի ղեկավարությանը` ձեռնարկության ծրագրերի իրականացման աշխատանքներում ընդառաջելու համար:

Ավելորդ չեմ համարում շեշտել, որ հիմնադրամի ֆինանսական մուտքերը կոմբինատի ու քաղաքի բոլոր ձեռնարկությունների աշխատողների աշխատավարձերից կամավոր սկզբունքով վճարվող միջոցներ էին: Զգալի ֆինանսական աջակցություն էին ցույց տալիս նաեւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն ու Քաջարան քաղաքի բարեկամ այլ կազմակերպություններ:

Փոխվել են ժամանակները, պայմաններն ու պահանջները: Հիմա նոր ձեւավորված հիմնադրամ ունենք` «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամ, որի գործունեությանը, նպատակներին ու նշանակությանը հետագայում կանդրադառնանք:

**– Քաջարան քաղաքի հանրային մթնոլորտի մասին: Որքանով հիշում ենք` վերջին համայնքապետական ընտրությունների նախօրեին որոշակիորեն ալեկոծված էր հանրությունը (չենք կարծում, որ փաստեր հիշատակելու կարիք կա): Իսկ ինչպե՞ս կգնահատեիք քաղաքի ներկայիս բարոյահոգեբանական մթնոլորտը:**

– Քաջարանում տիրում է բարձր եւ առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Իհարկե, առկա են լուծում պահանջող խնդիրներ, շատ անգամ նաեւ հիմնավոր դժգոհություններ, բայց դրանք որակել որպես ալեկոծություն` համաձայն չեմ: Ես դա համարում եմ որպես հասարակության զարգացման շարժիչ ուժ:

Կարեւորը, որ միշտ էլ համատեղ քննարկումների ցանկություն ու տրամադրություն կա, զերծ ենք մնում հապճեպ եւ կտրուկ որոշումներ կայացնելուց, եւ հարգվում են յուրաքանչյուրի տեսակետն ու կարծիքը: Մենք մի մեծ ընտանիք ենք, եւ յուրաքանչյուր հարց իր հանգուցալուծումը ստանում է մանրազնին ուսումնասիրության, շրջահայաց, փոխադարձ հարգանքի, փոխզիջման մթնոլորտում: Թե՛ կոմբինատի ղեկավարության, թե՛ քաղաքապետարանի ու մնացած բոլոր կառույցների համար առաջնայինը մարդն է` իր բոլոր հատկանիշներով: Իսկ լեռնագործի նկատմամբ, այն մարդու, ով ապառաժ քարից հաց է քամում, առավել եւս պետք է լինել հարգալից, ուշադիր եւ նրբանկատ… Բոլոր քաջարանցիներս, ի դեպ, լեռնագործներ ենք…

**– Ինչպե՞ս եք գնահատում Քաջարանի կոմբինատի նոր ղեկավարության գործունեությունը. բավականին ժամանակ է անցել ղեկավարության փոփոխությունից եւ, կարծում ենք, կարող եք հիմնավոր խոսք ասել:**

– Հանդիպել ենք նոր ղեկավարների հետ, քննարկել մեր անելիքները, եկել ընդհանուր համաձայնության: Առկա են բարիդրացիական հարաբերություններ, տիրում է ջերմ մթնոլորտ: Կարեւորը` նույն նպատակին ենք ծառայում` հանուն հասարակության բարեկեցության ապահովման: Թերեւս, կոմբինատը չի կարելի համեմատել որեւէ այլ հիմնարկի հետ` գործունեության կարճ ժամանակահատվածում գնահատանքներ շռայլելու առումով: Ժամանակն ամենաարժանավոր ուսուցիչն է, եւ, համոզված եմ, տարիներ հետո կտրվեն գնահատականներ ե՛ւ կոմբինատի աշխատակիցների, ե՛ւ հասարակության կողմից: Ամենաճիշտ գնահատականը տալիս են նրանք, ում հետ աշխատում ես ու ապրում: Այն, որ այսօրվա ղեկավարությունը գործունյա անհատներով է համալրված, նկատելի է: Ամենակարեւորը` հայրենասեր մարդիկ են:

**– Իսկ ինչպե՞ս եք գնահատում Սյունիքի նոր մարզպետի գործունեությունը, տարբերություն տեսնո՞ւմ եք նրա պաշտոնավարման առաջին եւ երկրորդ շրջանների միջեւ:**

– Այսօր մեր մարզպետի ամենամեծ առաքելությունը Սյունիքում միասնության, համերաշխության մթնոլորտի ստեղծումն է, սյունիքյան շահերի շուրջ բոլորիս ջանքերի մեկտեղումը: Եվ դրա համար ոչ քիչ հիմքեր կան: Ընդամենը մեկ օրինակ` մեկ տարի չղեկավարեց մեր մարզը, բայց դա չխանգարեց, որ մարզի բնակիչները նրա հետ հարաբերվեն այնպես, ինչպես նախկինում, երբ նժույգի վրա էր: Եվ սա այն դեպքում, որ պաշտոնաթող մարդկանց սովորաբար հետո չեն հիշում: Ես կարծում եմ` նա կիսատ գործեր ուներ եւ վերադարձել է դրանք ավարտին հասցնելու համար: Իմ կարծիքով` նա հիմա ավելի հանդուրժող է, փորձառու, իմաստնացած, քինախնդիր չէ, ինչը տեսնում ենք ամենօրյա

<hr>

**Վարդան Գեւորգյանի մարտական ուղին**

*1991թ. մասնակցել է Քաջարանի երկրապահ ջոկատի ստեղծմանը: 1992թ. սեպտեմբերին զորակոչվել է ՀՀ ազգային բանակ:*

*Նախնական զինվորական վերապատրաստություն է անցել Լուսակերտում տեղակայված գնդում, որի կազմում 1992թ. հոկտեմբերին տեղափոխվել է Կապան եւ մասնակցել հարակից տարածքների ազատագրմանը, այնուհետեւ 1993թ. հունվարի 1-ից տեղափոխվել եւ նշանակվել է 97-րդ ԱՄՀԲ-ի 5-րդ հրաձգային գումարտակի ականանետային մարտկոցի հրամանատար:*

*Այդ գումարտակի կազմում շարունակել է մասնակցությունը Կապանի շրջանի սահմանամերձ Ծավ, Ներքին Հանդ, Շիկահող, Սրաշեն, Ագարակ գյուղերի եւ ՀՀ հարավարեւելյան ուղղությամբ սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողություններին (Զանգելանի, Կուբաթլուի, Հորադիզի, Ֆիզուլիի շրջաններում):*

*Որպես ակտիվ, համարձակ եւ բարեխիղճ հրամանատար` նշանակվել է գումարտակի շտաբի պետ, գումարտակի հրամանատարի պաշտոնակատար, որի ընթացքում գումարտակը փառքով եւ բարձր պատասխանատվությամբ է կատարել իր առջեւ դրված խնդիրները:*

*1994թ. փետրվարի 18-ին նշանակվել է N զորամասի հակատանկային դիվիզիոնի հրամանատար, որի կազմում, մասնակցելով մարտական գործողություններին, կարողացել է ոգեւորել ենթականերին եւ անձնական օրինակով բարձրացրել նրանց մարտական ոգին: Ակտիվ մասնակցել է առաջնագծի ինժեներաշինարարական աշխատանքներին եւ բանակաշինության գործին:*

*1995թ. մարտի 18-ին զորացրվել է ՀՀ զինված ուժերից եւ հաշվառվել պահեստազորում` պահեստազորի մայոր:*

*Պարգեւատրվել է «Արիություն», «Անանիա Շիրակացի», ԼՂՀ «Մարտական ծառայություն», ՀՀ Ազգային ժողովի «Պատվո», «Գարեգին Նժդեհ», «Ադմիրալ Իսակով», «Մարտական երախտագիտություն» մեդալներով, ԵԿՄ «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով եւ այլ մեդալներով ու շնորհակալագրերով:*

աշխատանքում, ինչից շահում է մարզը:

**– Ի տարբերություն մարզի շատ ղեկավարների՝ Դուք, առիթ եւ հարցեր լինելիս, կարծիք եւ տեսակետ եք հայտնում բացեիբաց, ինչը դրական երեւույթ է, թեեւ շատ հաճախ այդ բացախոսությունը շրջվում է Ձեր դեմ:**

**Երբ 2013թ. նոր մարզպետի նշանակման հարց էր քննարկվում՝ Դուք պատրաստակամություն հայտնեցիք գլխավորել մարզը: Ուզում ենք իմանալ՝ այսօ՞ր էլ պատրաստ եք գլխավորել մարզը, եթե նման անհրաժեշտություն առաջանա, եթե կառավարությունը նպատակահարմար գտնի:**

**Եվ, ի վերջո, որո՞նք են Ձեր անձնական այն որակները, արժանիքները, որ նման հավակնությունների հիմք են ծառայում:**

– Դա 2013 թվականին էր: Ես ընդամենը պատասխանել եմ մի քանի լրատվամիջոցի հարցերի՝ այն դեպքում, երբ տարբեր թեկնածուների վերաբերյալ շահարկումներ կային: Մինչդեռ ոմանք վարագույրից այն կողմ էին ինչ-ինչ ճանապարհով փորձում զբաղեցնել մարզպետի աթոռը:

Ասեմ, որ մարզպետ դառնալը ցանկությամբ չէ պայմանավորված, եւ այդ հարցը ՀՀ նախագահի ու կառավարության իրավասության շրջանակներում է գտնվում: Նրանք են հաշվի առնում անձի որակներն ու արժանիքները՝ տվյալ պաշտոնում նշանակելու համար:

Ըստ իս՝ մարզպետին բնորոշ պետք է լինեն քաղաքական եւ պետական կառավարման փորձառությունը, հայրենի բնօրրանի նկատմամբ սերը, ճանաչողությունը, մարդկանց վստահությունը եւ անձամբ ճանաչված լինելը, անմիջականությունը, խորաթափանցությունը, հարգանքը, օգնելու, մարդու, ընկերոջ կողքին միշտ լինելու պատրաստակամությունը, բոլորի կարծիքների հետ հաշվի նստելու կարողությունը, հանդուրժողականությունը, աշխատանքի մեջ անձնական կարգապահությունը, խստապահանջությունը, արդարացի որոշումներ կայացնելու կարողությունը, ներողամտությունը:

2015 թվականն է, ունենք մարզպետ, ում բնորոշ են վերոգրյալ հատկանիշները, որի շուրջը հավաքվել ենք ու հայտնել համագործակցելու պատրաստակամություն: Եվ, ասեմ, որ ստացվում է:

**– Չէի՞ք ցանկանա գնահատական տալ Մաքսիմ Հակոբյանի քաջարանյան գործունեությանը: Եվ, իհարկե, որո՞նք էին նրա սխալները, ի՞նչը չէր հերիքում նրան. նկատի ունենք հատկապես կոմբինատի համասեփականատեր դառնալուց հետո ընդգրկող ժամանակաշրջանը:**

– Դեռեւս վաղ է Մաքսիմ Հակոբյանի գործունեությանը վերջնական գնահատականներ տալու համար: Նա դեռ կիսատ թողած շատ բան ունի անելու: Թեեւ իր գնահատականները պարոն Հակոբյանը մասամբ ստացել է ե՛ւ հասարակության, ե՛ւ հանրապետության բարձրաստիճան ղեկավարների կողմից:

Ուրախ եմ, որ նա վաստակել է բազմահազարանոց կոլեկտիվի հարգանքը: Հայրենասեր, մարդկային բարձր արժեքներ ունեցող, հիանալի մարդ է:

**– Դարձյալ ուզում ենք օգտվել անկեղծանալու Ձեր արժանիքից եւ մի՝ ոչ ընդունված հարց քննարկել: Իշխանական ներկա հարաբերություններում, հավանաբար նկատել եք, ամենամեծ ճգնաժամը մարդկային հարաբերությունների ոլորտում է: Ինչպե՞ս է ստացվում, որ նույն չինովնիկները, նույն բիրդանաղաները (սեփական կուսական բթությունը սպիտակ վերնաշապիկով ծածկած եւ լծե մտավորականի կեցվածքով) անընդհատ հայտնվում են կշեռքի ծանր նժարին կամ, պատկերավոր ասած, մերձիշխանական արոտավայրերում՝ գնացողի հետեւից հայհոյում են, եկողին՝ փառաբանում: Ըստ էության այլեւս կարեւոր չէ սեփական դեմք-դիմագիծ ունենալը: Կարեւորը, թութակի հանգույն, ուժեղի, իշխանավորի ասածը կուրորեն կրկնելն է եւ նրանց հետեւից վազելը:**

**Ինչպե՞ս եք վերաբերվում մարդկային հարաբերությունների այդ կոռոզիային, հատկապես իշխանավորների եւ ունեւորների զգալի մասի անդեմությանը, կուսակցականների մի ստվար մասի այլասերմանը (բազմաթիվ օրինակներ ունենք մեզանում, երբ միեւնույն մարդը միանգամից երկու-երեք կուսակցության է ծառայում՝ վայրկյան անգամ չկարմրելով): Ո՞ւր ենք գնում այսպես:**

– Ձեր ասածները, իհարկե, ոչ բոլորին են վերաբերում: Դրանք «հատուկ» տեսակ են: Ցավոք, բոլոր ժամանակներում, հասարակության բոլոր ֆորմացիաներում ու կացութաձեւերում այդպիսիք միշտ եղել են: Մի բան կասեմ միայն՝ նույնիսկ հզոր, ամենակարող արծվի բարեհաճ կամքը չի օգնի, որ ճնճղուկը բազե դառնա: Նրանք մեծն Շիրազի նկարագրած փրփուրն են, որ կարող են ի հայտ գալ օվկիանոսներում ու ծովերում, որոնց ժամանակ առ ժամանակ քամին է տեղաշարժում… Իսկ մարգարիտներն այնտեղ են՝ հիմքում:

Թեթեւ տանենք այդ դժգույն պրոցեսը, …անցնենք առաջ:

Ամեն ինչ այնտեղ է՝ վարագույրի հետեւում: Իսկ թատրոնն ավարտվում է այն պահին, երբ փակվում է վարագույրը, եւ խամաճիկները երբեք հանդիսատեսի ծափերին չեն արժանանում:

**– Գոնե մարզի քաղաքապետներով, մարզպետի տեղակալներով, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարով ճանապարհ դնեիք պաշտոնանկ արված Վահե Հակոբյան մարզպետին, մարդ էր էլի՝ իր ողբերգականությամբ հանդերձ…**

**Տպավորություն ունենք, որ մեր քաղաքապետներն առաջինն են տարանջատվում-սահմանազատվում նժույգից իջնողներին՝ մոռանալով, որ հենց իրենք էին երեկ ջան ասում, ջան լսում ե՛ւ մարզպետների, ե՛ւ կոմբինատի տնօրենի հետ, մոռանալով, որ իրենք քաղաքապետ են ընտրվել ոչ թե ժողովրդի կամքով, այլ այդ մարդկանց կամեցողությամբ:**

**Հիմա էլ այդ քաղաքապետներից մեկին, ով խառնակ ժամանակներում առաջին ծլկողն է ու առավել երեսպաշտը, կարելի է անընդհատ հանդիպել մարզպետարանի մատույցներում կամ կոմբինատների տնօրենների հետ:**

– Իսկ ի՞նչ է նշանակում ճանապարհել. սա կուլտուրա է, որը նախկինում մեծ արժեք ուներ, երբ վաստակած հանգստի մեկնելիս գնահատում էին մարդու անցած ճանապարհը, նրա արժանիքները, ավանդը, բացառիկ ներդրումները եւ այլ ուսանելի արժեքներ: Այդ արարողությունը կատարվում էր բարձր պատասխանատվությամբ, հասարակական մեծ հնչեղությամբ, եւ բոլորը մեծ ոգեւորություն էին ապրում՝ անթաքույց ձգտելով նմանվել նման մարդու, անհատի: Կարծում եմ՝ այս մշակույթը պետք է վերականգնել, բայց կրկնում եմ՝ նրանց նկատմամբ, ովքեր մի օր կգնան վաստակած հանգստի: Իսկ երբ մարդ մի գործից մյուսին է անցնում, ի՞նչ ճանապարհելու մասին է խոսքը…

**– Կապանում եւ Քաջարանում օրեցօր թեժանում են խոսակցությունները առ այն, թե իբր վերջին մեկ տարում փոքր եւ միջին ձեռնարկություններից շատերը դադարեցրել կամ դադարեցնում են իրենց գործունեությունը՝ պատվերներ չունենալու պատճառով: Իբր երկու հազար մարդ արդեն (այդ ամենի հետեւանքով) գործազուրկ է դարձել Կապանի տարածաշրջանում:**

**Դուք իրադարձությունների կենտրոնում եք եւ կարող եք հիմնավոր խոսք ասել՝ իրո՞ք փոքր եւ միջին բիզնեսը վերջին մեկ տարում խորը ճգնաժամի մեջ է ընկղմվել: Քաջարանի օրինակով կարո՞ղ եք հիշատակել ընկերությունների անուններ, որոնք գործել են, բայց հիմա չեն գործում եւ ինչո՞ւ չեն գործում:**

– Այո՛, Դուք ճիշտ եք նկատել: Բայց պետք է փաստել, որ դրանց նպաստել են բազմաթիվ շարժառիթներ, որոնցից չէինք կարող անմասն մնալ: Իհարկե, տարածաշրջանների համաչափ զարգացման ռազմավարությունը՝ պետության կողմից որդեգրված, որոշակիորեն մեղմում է այս խնդիրը, պետական բյուջեի հաշվին բավականին շինարարական աշխատանքներ են իրականացվում տարածաշրջանում, այդ թվում եւ Քաջարանում, օրինակ, «Քաջարանի արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի շենքի կապիտալ նորոգման աշխատանքները: Կոմբինատի կողմից էլ զգալի ներդրումներ եւ ծախսեր են կատարվում: Հիշենք Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ դպրոցականների ու զինվորական զորամասերի համար արվածը: Ամբողջովին վերանորոգվում է մանկապարտեզ Քաջարան քաղաքում, հոգածության ներքո են կրթական, առողջապահական, մարզական հաստատությունները:

Տարիներ ի վեր զգալի ներդրումներ են կատարվել ԶՊՄԿ-ի կողմից, սակայն, կարծում եմ, այսօր միջազգային շուկայում պղնձի եւ մոլիբդենի գների անկումն է առաջացած դժվարությունների պատճառը: Լինենք լավատես, եւ, կարծում եմ, ամեն ինչ ժամանակի մեջ կհարթվի: Միեւնույն ժամանակ ուզում եմ հարազատի մտահոգությամբ հորդորել որոշ շինարարական կազմակերպությունների ղեկավարների՝ աշխատանք պետք է որոնել, պետք է լինել մրցունակ: Այսօր աշխարհը փոխվում է րոպեների ընթացքում, ամեն ինչ գնում է դեպի մրցակցություն, որակական բարդ պահանջների ապահովում: Ես չեմ ընդունում, երբ կազմակերպությունը կատարում է բազմաթիվ շինարարական աշխատանքներ, տնօրինում է իսկայական ֆինանսական միջոցներ, բայց աշխատանքները կատարվում են ինչպես 10-15 տարի առաջ՝ օգտագործելով հնացած ու հնաոճ սարքավորումներ, տեխնիկական միջոցներ, տեխնոլոգիաներ: Համոզված եմ՝ ցանկացած մրցունակ կազմակերպություն ի վիճակի է լուծելու մշտապես աշխատանքով ապահովված լինելու խնդիրը:

**– Մեր վերջին հարցազրույցում, եթե հիշում եք, ընդհանուր հայտարարի չեկանք քաղաքի գործազուրկների թվաքանակի հարցում: Հիմա կարո՞ղ եք ասել՝ քանի գործազուրկ կա Քաջարան քաղաքում:**

– Իմ կարծիքով, գործազուրկը նա է, ով ցանկանում է աշխատել, բայց աշխատանք չկա: Այսօր մենք ինչո՞ւ ենք աղքատ: Երեխան ավարտում է դպրոցը, ընտանիքում որոշում են, որ պիտի բարձրագույն ուսումնական հաստատություն դիմի: Բայց այսօր ես ունեմ ոչ պետական աշխատող, որ լավ դիմահարդար է, վարսահարդար, եւ ավելի շատ գումար է վաստակում: Բարձրագույն կրթություն ստանալը դարձել է պարտադիր երեւույթ, այնինչ մենք նաեւ լավ արհեստավորների կարիք ունենք:

**– Դուք նորից չասացիք, թե քանի գործազուրկ կա Քաջարանում, բայց առաջ անցնենք… Տարիներ շարունակ Կապանի տարածաշրջանի (եւ ոչ միայն) շատ բնակիչներ (հատկապես երիտասարդներ) ձգտում էին բնակվել Քաջարան քաղաքում եւ աշխատել տեղի ընկերություններում: Այսօ՞ր էլ այդ միտումը կա:**

**Եվ, եթե կարելի է, անշարժ գույքի քաջարանյան շուկայի մասին՝ հիմնական ցուցանիշները համեմատելով 2014-ի կամ 2013-ի նույնանման ցուցանիշների հետ:**

– Այն համայնքները, որտեղ առկա է աշխատանք գտնելու հնարավորություն, միշտ էլ լինելու են ուշադրության կենտրոնում, իսկ Քաջարանը, կարծում եմ, մշտապես կլինի այդպիսին:

Արտադրության ծավալների ավելացումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը խթանում են նոր աշխատատեղերի ստեղծումը: Քաջարանում հիմնական խնդիրը կանանց ու նաեւ մարդկանց մասնագիտական աշխատանքով ապահովելու հարցն է, ինչը բոլորիս հոգածության ներքո է եւ անպայման լուծում կստանա: Իսկ մի բան փաստ է. Քաջարանում վաղուց է՝ արդեն վարձով բնակարան գտնելը գրեթե անհնար է, իսկ վաճառվող բնակարաններ հազվադեպ են պատահում:

**– Կարծում ենք՝ նորմալ են Ձեր հարաբերությունները Քաջարան գյուղական համայնքի ղեկավարի ու բնակիչների հետ: Նրանց երբեմնի անհանգստության պատճառն էլ, կարծեք, սառեցված է, եթե նույնիսկ օրակարգից հանված չէ: Դուք էլ Ռաֆիկ Աթայանի հետ, ըստ երեւույթին, տարակարծությունների հիմքեր չունեք: Ճի՞շտ են մեր դիտարկումները:**

– Ես բոլորի հետ լավ հարաբերություններ ունեմ: Ինքս կամեցող մարդ եմ եւ բոլորի մեջ միայն լավն եմ տեսնում:

**– Ինչպե՞ս եք գնահատում քրեածին իրավիճակը Քաջարանում: Դե, իհարկե, տարիներ առաջ տեղի ունեցած սպանությունը չի մոռացվել, եւ դա բնական է: Հիմա էլ, կարծեք, աղմկահարույց դեպքերի պակաս չկա՝ մեքենա են հրկիզում, մեքենա ջարդում, վառելիքի հափշտակման մեխանիզմներ հորինում… Տեսանկարահանող սարքերի աննախադեպ առատությունն էլ, ըստ երեւույթին, քիչ է օգնում:**

– Քաջարանը բոլոր ժամանակներում եղել եւ մնում է ամենահանգիստ, հյուրասեր եւ աշխատավոր համայնքը: Եկեք մասնավոր դեպքերից ելնելով՝ կարծիքներ չկազմենք:

**– Վերջին ներհանրապետական ու ներքաղաքական իրադարձությունների արձագանքը Քաջարանում: Ձեր համայնքում գործում էր ԲՀԿ-ի բավականին լուրջ կառույց (եւ Մերուժան Աթայանն էր այդ կառույցի ճակատը զարդարում, ոչ թե ԲՀԿ-ն՝ Մերուժանի ճակատը): Արդյո՞ք քաջարանյան կազմակերպության շարքերից էլ արտահոսք է սկսել:**

– Դա խնդրում եմ ճշտել ոչ ինձ հետ:

**– Ի՞նչ եք կարծում, եթե երբեւէ ՀՀԿ-ն դադարի իշխող կուսակցություն լինել, ՀՀԿ-ականները պակա՞ս եռանդով կփախչեն կուսակցության շարքերից:**

– Մի ճշտում՝ ՀՀԿ-ն ժամանակին եղել է նաեւ ընդդիմություն, բայց շարունակել է պայքարել հանուն այն գաղափարի, որի կրողն է: Կուսակցության հիմնադիր, լուսահոգի Աշոտ Նավասարդյանի կորստից հետո մենք չհուսահատվեցինք, էլ ավելի ուժեղացանք: Կուսակցությունը տվեց ՀՀ վարչապետներ՝ Վազգեն Սարգսյան, Անդրանիկ Մարգարյան, նրանց ցավալի կորստից հետո՝ վարչապետ Սերժ Սարգսյան, իսկ այսօր՝ հանրապետության նախագահ: Օրեցօր ավելի ենք ամրանում ու ամրապնդվում, որովհետեւ յուրաքանչյուր կուսակցություն պետք է ունենա գաղափար, հատուկ, ընդգծված գործելաոճ:

ՀՀԿ-ի հետ երբեք չի կատարվի այն, ինչ տեղի ունեցավ ԲՀԿ-ի հետ:

Ինքս, օրինակ, կուսակցության անդամ եմ 1997 թվականից, ՀՀԿ Քաջարանի շրջանային կառույցի ղեկավար այդ նույն թվականից, որն առաջիններից է մեր երկրում: Կուսակցությանն անդամագրվել եմ ոչ թե ուժեղանալու, այլ ուժեղացնելու, ոչ թե օգտվելու, այլ օգնելու համար, ինչպես շատերը:

**– Դուք Արցախյան ազատամարտի իրական մասնակիցներից եք, ԵԿՄ-ին կից առաջին սերնդի ներկայացուցիչներից: Արժե՞ր հանրակրթական դպրոցներում ստեղծել պատանի երկրապահների ակումբներ. չէ՞ որ դպրոցական տարիքում եւ դպրոցական միջավայրում իսկական երկրապահությունը լավ սովորելն է (սա աքսիոմատիկ ճշմարտություն է):**

– Այո՛, 1992 թվականից մինչեւ 1995 թվականի մարտ ամիսը ծառայել եմ ՀՀ ազգային բանակում, մասնակցել ՀՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողություններին: ԵԿՄ անդամ եմ: Իմ մեջ մի կարծրատիպ է ձեւավորվել՝ ոչ միայն զոհված եւ հաշմանդամ դարձած ազատամարտիկներն ու նրանց ընտանիքները, այլեւ բոլոր ազատամարտիկներն ու գործող բանակի սպան ու զինվորը պետք է ունենան ամենաբարձր կարգավիճակը մեր երկրում: Եթե սա չընդունենք ու չհասնենք դրան, շատ բան ենք կորցնելու:

Մենք ապրում ենք այնպիսի մի անկանխատեսելի տարածաշրջանում, որ «դատապարտված» ենք ուժեղ բանակ ունենալու: Հասարակությունը բանակի եւ սպայակազմի նկատմամբ պետք է ձեւավորի ընդգծված հարգանք եւ արժանի մոտեցում ցուցաբերի: Հայոց բանակի երեկվա եւ այսօրվա զինվորն ու սպան պետք է լինեն մեր երկրի ամենաարտոնյալ խավը: Դա ոչ այնքան նրանց է պետք, որքան հասարակությանը:

Նույն կարգով, ՀՀ բանակում ծառայած զինվորի ընտանիքը պետք է տարբերվի ծառայությունից խուսափած մարդու ընտանիքից: Ժամանակին մեր երկրին իր կյանքը, երիտասարդությունը, առողջությունը տված տղամարդը պետք է տարբերվի մյուսներից:

Այսօր հանրակրթական դպրոցներում սովորում է մեր ժողովրդի ապագան՝ պատանիներ ու աղջիկներ, ովքեր դեռեւս չեն հասցրել վարակվել հասարակության մեջ առկա «չարորակ բացիլներով»: Մենք պետք է մեր ուժն ու եռանդը ներդնենք՝ նրանց մեջ առկա դրական, բարոյական, համամարդկային, հայրենասիրական հատկանիշները զարգացնելու եւ արատավոր սովորույթները արմատախիլ անելու համար:

Ես, բարձր գնահատելով մեր մանկավարժների, դպրոցի նվիրյալների դերը, կարծում եմ, այս ազգանվեր նախաձեռնությունը, ինչպիսին երկրապահների ակումբի ստեղծումն է, կնպաստի ընդհանուր խնդրի լուծմանը:

Չմոռանանք, որ ԵԿՄ-ն հայոց նորանկախ պետության ակունքներում է, հայոց ազգային բանակի ծնողը եւ մեծ պարտք ու պարտավորություն ունի…

Այո՛, ես ընդունում եմ, որ Երկրապահը պետք է լինի հանրակրթական դպրոցում:

**Հարցազրույցը՝**
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԵՎ**
**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ**

# Շարադրությունների մրցույթի հետ Կապանի քաղաքապետարանն առնչություն չունի



**Ռեպլիկ**

**Մարտի 19-ին Կապանի կաբելային հեռուստապատեությամբ Նոննա Բաղդասարյանի թողարկած նյութում՝ համեմված քաղաքապետարանի աշխատակցուհի Նառա Մելքումյանի խոսքով, աղավաղվել է մի շատ պարզ իրողություն:**

Նյութի հեղինակն ու քաղաքապետարանի աշխատակցուհին պատմում են, որ դպրոցներում հայտարարվել է շարադրությունների մրցույթ՝ «Հարյուր տարվա ցավի գույնը» վերնագրով: Սակայն ո՛չ լրագրողը, ո՛չ էլ քաղաքապետարանի աշխատակցուհին չեն ասել, թե ով եւ ինչ նպատակով է այդ մրցույթը հայտարարել: Փոխարենն ասվել է, որ լավագույն շարադրությունները կարժանան մրցանակի՝ 3 տեղ՝ Կապանի քաղաքապետի, 5 տեղ՝ մարզպետի կողմից՝ տպավորություն թողնելով, որ Կապանի քաղաքապետարանը համահեղինակ է շարադրությունների մրցույթի:

Հարկ ենք համարում նշել՝ Կապանի քաղաքապետարանն առնչություն չունի այդ վերնագրով անցկացված շարադրության մրցույթի հետ: Եվ շատ տարօրինակ է ու զարմանալի, որ քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը թույլ է տվել իր աշխատակցուհուն՝ քաղաքապետարանին վերագրել մի բան, որի հետ քաղաքապետարանը կապ չունի:

Իրականում շարադրությունների մրցույթը, «Սյունյաց երկրի» առաջարկությամբ, հայտարարել են Սյունիքի մարզպետարանն ու թերթի խմբագրությունը, ինչի վերաբերյալ հայտարարություն է տարածվել «Սյունյաց երկրի» ս.թ. հունվարի 23-ի եւ հետագա համարներում:

Մրցույթի աշխատանքները գլխավորել է լրագրող Արմինե Հարությունյանը:

Արդեն իսկ ամփոփվել են մրցույթի արդյունքները, իսկ ընտրված չորս շարադրությունը կհրապարակվի թերթի՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված համարում:

Իսկ եթե որեւէ համայնքի ղեկավար կամենում է մարզային մրցույթի հաղթողին խրախուսել, ապա դա իր գործն է ու ողջունելի է: Միայն թե դա հնարավոր կլինի անել հատուկ համարի թողարկումից հետո, որի էջերում էլ կհրապարակվեն լավագույն շարադրությունները, որոնցից մեկի հեղինակը Կապանից է:

...Գոնե մեր ազգային ողբերգության 100-ամյա տարելիցի առիթով խաղեր չտանք, չստենք ու մարգարեի ծիրանի չձգենք մեր լղար ուսերին:

**«Սյունյաց երկիր»**



# Անգլերենի ուսուցման դասասենյակ՝ Մեղրիում

**Հանրակրթություն**

Մեկ տարի առաջ ՀՀ-ում ԱՄՆ-ի նախկին դեսպանը Մեղրիում գտնվելու ժամանակ այցելեց նաեւ քաղաքի N2 դպրոց, որտեղ դեսպանատան աջակցությամբ անվճար հիմունքներով կազմակերպվում էր տարբեր տարիքային խմբերում անգլերենի ուսուցում: Ընդունելության ժամանակ դեսպանին հիացրել էր դպրոցի աշակերտներից մեկի անգլերենով գեղեցիկ ողջույնը: Հիացմունքը հիմք հանդիսացավ, որ դեսպանատունը ժամանակակից սարքավորումներով, համակարգիչներով, գույքով կահավորեր անգլերենի ուսուցման դասասենյակը:

Դպրոցը դասասենյակի բացմանը նախապատրաստվել էր հավուր պատշաճի՝ ազգային կոլորիտի թատերականացված դրվագներով, երգով, պարով, հյուրասիրությամբ:

Արարողակարգը բացեց դպրոցի փոխտնօրեն Վարսիկ Սիմոնյանը, ապա ողջույնի խոսքով հանդես եկան դպրոցի տնօրեն Մերի Հակոբյանը, Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանը, դպրոցի անգլերենի երիտասարդ ուսուցչուհի Լուսինե Թադեւոսյանը:

Դասասենյակի բացման ժապավենը կտրելու պատիվը տրվեց Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանին եւ ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի տնօրեն Դիլ Ժակլինին, ով գոհունակություն հայտնելու հետ մեկտեղ հավաստիացրեց հետագա համագործակցության մասին:

Միջոցառումն ավարտվեց դպրոցականների համերգային գեղեցիկ կատարումներով:

**ՍԻՐՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Կա՞ երաշխիք, որ Կապանի սպանդանոցում կրկին չի մորթվի բրուցելյոզով հիվանդ անասուն

**Արտակարգ դեպք**

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

տազոտման են ենթարկվում՝ բրուցելյոզի տարածվածության աստիճանը ճշտելու համար. այդ գործն իրականացնում է «ՀՀ ԱՆ տեսչության Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Առայժմ հայտնաբերվել է, ինչպես նշվեց, 19 վարակակիր՝ 27 ստուգված անձանցից: Տեսչությունը փորձում է ճշտել այն մարդկանց ցանկը, ում հետ շփվել են մորթման արտադրամասի աշխատակիցները: Ճշտվում է նաեւ, թե արտադրամասի աշխատակիցներից ովքեր են սպանդանոցի մսեղիքից տուն տարել եւ օգտագործել: Կենտրոնի պետը միաժամանակ տեղեկացրեց, որ արտակարգ պատահարի առիթով դեռեւս վարչական վարույթ չի հարուցվել, քանի որ 2014թ. դեկտեմբերի 1-ից սպանդանոցը չի գործում: Վարույթը կսկսվի սպանդանոցի աշխատանքները վերսկսվելուց անմիջապես հետո:

Արդեն իսկ ճշտված է, որ բրուցելյոզի օջախը Կապանի սպանդանոցի մորթման արտադրամասն է: Եվ իբր հիվանդությունը բռնկվել է մանր եղջերավոր անասունների (ոչխարների) մորթման պրոցեսում: Ընդ որում՝ մորթման արտադրամասում 2014թ. նոյեմբերի երկրորդ կեսից մորթ չի կատարվում, ինչը նշանակում է, որ հիվանդությունը մի քանի ամիս ինկուբացիոն շրջան է ապրել:

Տեղի ունեցած արտակարգ պատահարը, սակայն, բազմաթիվ հարցերի տեղիք է տվել, որոնցից մի քանիսը՝ ստորեւ:

Պատահարի առիթով, զարմանալիորեն, Հայաստանի առողջապահության եւ գյուղատնտեսության նախարարությունները սկզբնապես լռեցին, թեեւ իսկական իրարանցում պիտի լիներ՝ պատճառների հայտնաբերման, հետեւանքների հաղթահարման համար: Ինչպես արդեն նշվել է մի քանի լրատվամիջոցի կողմից, տպավորություն է ստեղծվում, թե պատկան մարմինները ցանկանում էին դեպքը կոծկել: «Իրազեկ եւ պաշտպանված սպառող» ՀԿ-ի նախագահ Բաբկեն Պիպոյանն էլ, ով իրավիճակին ծանոթանալու համար եղել է Կապանում, հայտարարել է. **«Մարտի սկզբից նախարարությունը տեղյակ է եղել, որ հիվանդների թիվն ավելանում է, ու, չգիտես ինչու, մինչ մեր կողմից հայտարարություն տարածելը, պատկան մարմինները բացարձակապես լռություն են պահպանել»:**

Խիստ տարօրինակ մի իրողություն. սպանդանոցի հետ գործ ունեցող անձանցից իմացանք, որ, իրոք, անասունների բոլոր խմբաքանակները մուտք են արվել սպանդանոց ուղեկցող փաստաթղթերով, այդ թվում՝ N1 ձեւով՝ հաստատված տվյալ համայնքի անասնաբույժի կողմից: Ըստ ուղեկցող փաստաթղթերի՝ մուտք արված անասունները հիվանդ չեն եղել: Իրականում, մինչդեռ, անասունների առնվազն մի մասը բրուցելյոզի ախտակիր է եղել: Իրազեկ մարդիկ չեն բացառում նաեւ, որ բժշկի միեւնույն փաստաթղթով անասունների միանգամայն այլ խմբաքանակ կարող էր մուտք արված լինել սպանդանոց:

Նման անորոշության մեջ չէինք հայտնվի, եթե կենդանիները համարակալված լինեին (ի դեպ, կառավարությունն այդ հարցի վերաբերյալ որոշում ունի՝ առայժմ թղթի վրա մնացած):

Գոնե իմացա՞նք, թե որ մարզի եւ որ համայնքի ոչխարներն էին վարակակիր: Իհարկե, չիմացանք եւ չենք կարող իմանալ: Այդ սպանդանոցը մեկ տարում 25 հազար ոչխար է ընդունել, ընդ որում՝ 14 հազարը՝ այլ մարզերից, մնացյալը՝ Սյունիքից ու ԼՂՀ-ից: Եվ ոչխարներն ընդունվել են, ինչպես նշվեց, համարներ չունենալով:

Բավականին հիմնավոր են տարակույսներն անասունների վակցինացման եւ անասունների ստուգման հարցում: Ինքներդ դատեք՝ մեզանում գոյություն չունի կենդանիների համատարած համարակալման եւ հաշվառման պրակտիկա, չի վերահսկվում անասունների տեղաշարժը... Այնպես որ զարմանալի չէ, որ տեղի ունեցածի համար Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Սյունիքի մարզային կենտրոնի պետ Արթուր Խաչատրյանն ու Կամո Սարգսյանը («Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության եւ բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային կենտրոնի ղեկավար), նախեւառաջ, միմյանց են մեղադրում:

Որեւէ մեկը կարո՞ղ է հաստատել, որ սպանդանոցի մորթման արտադրամասում իսկապես 47 հոգի է աշխատել, եւ չգրանցված աշխատողներ չեն եղել:

Որեւէ մեկը կարո՞ղ է հավաստել, որ Պարսկաստան արտահանված մսեղիքը վարակված չի եղել բրուցելյոզով:

Հարցերի այս շարքը կարելի է շարունակել, բայց բավարարվենք ասվածով եւ ակնկալենք, որ դրանց պատասխանը երբեւէ ջրի երես կհանվի:

Առայժմ, մինչդեռ, կարող ենք փաստել մի քանի իրողություն:

Կապանի սպանդանոցը կառավարվում է սիրողական մակարդակով: Տնօրեն Սամվել Ավետիսյանը, ով չունի գյուղատնտեսական կրթություն դժվար թե հիմնավոր պատկերացում ունենա անասնաբուծությանն ու անասնաբուժությանն առնչվող նրբագույն հարցերում: Ավելին՝ սպանդանոցի համասեփականատեր Վահե Հակոբյանն իրեն բնորոշ անլուրջ վերաբերմունք ունի այդ գործի հանդեպ եւս:

ՀՀ գյուղնախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը մարզում գործում է ձեւականորեն: Տեսեք՝ նախասպանդային քննություն է կատարվում (իբր), բայց այդ զննությունը պատասխան չի տալիս՝ տվյալ անասունը հիվա՞նդ է բրուցելյոզով, թե՞ ոչ:

Նույն տարակույսը կարելի է հայտնել հետսպանդային զննության վերաբերյալ: Այդ աշխատանքն իրականացնող «Վետ-Լին ֆարմ» ՍՊԸ-ն (Արթուր Խաչատրյանի ընկերությունն է), փորձաքննելով մսեղիքը, դարձյալ չի պատասխանում գլխավոր հարցին՝ մսեղիքում կա՞ն բրուցելյոզի ախտանիշներ, թե՞ ոչ: Եվ ուրեմն չի բացառվում, որ «Հալալ» ապրանքանիշով, մոլլայի դուրանաշունչ խոսքերով օրհնված միսը Պարսկաստանի սպառողների շրջանում բրուցելյոզի բռնկման տեղիք տա՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով:

Ստեղծված իրավիճակում լրջագույնս մտահոգվելու խնդիր ունի ՀՀ գյուղնախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության եւ բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը եւ հատկապես ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային կենտրոնը: Ըստ էության ոչ ոք չի կարող բացառել, որ մի օր էլ հիվանդ մսեղիքը (համայնքի անասնաբույժի կեղծ տեղեկանքով) հայտնվի շուկայում (եթե, իհարկե, մինչեւ հիմա չի հայտնվել):

Չենք կարող հարց չուղղել Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության վարչության պետ Սամվել Թանգյանին՝ ինչո՞ւ մեր մարզում չի իրականացվում անասունների համարակալում, եթե այդ մասին կա կառավարության որոշում:

Պատահարը եւս մեկ անգամ վկայում է, որ անասունների մթերման գործը Սյունիքի մարզի առջեւ ծառացած հիմնախնդիրներից է:

Իսկ վերջում հիշեցնենք, որ Կապանի սպանդանոցը՝ «Գյուղարտ» անունը կրող ՍՊ ընկերությունը, որ գործարկվել է 2013թ. հուլիսի 20-ին՝ շարիաթի օրենքներով եւ Պարսկաստանից հրավիրված մոլլայի օրհնանքով, ունի երկու սեփականատեր. ընկերության 50 տոկոսի բաժնետերը «Լա-Մաքս գրուպ» ՍՊԸ-ն է (Վահե Հակոբյանի սեփականությունն է), մյուս հիսուն տոկոսի բաժնետերը «Շահր ինվեստ» պարսկական ընկերությունն է: Ի դեպ, «Լա-Մաքս գրուպը» Կապանում նաեւ խոշոր եղջերավոր անասունների մորթ է իրականացնում՝ տարեկան մոտ 250 գլուխ՝ սեփական արտադրամասում երշիկեղեն պատրաստելու համար: Հուսանք, որ բրուցելյոզը մուտք չի գործի մսեղենի մշակման այդ ոլորտը եւս:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

*Մրցանակաբաշխություն*

# Մեղրու ճանապարհաշինական ընկերությանը՝ ՀՀ կառավարության մրցանակ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

է խրախուսել եւ խթանել տեղական արտադրությունը:

**«Էկոնոմիկայի նախարարությունը մեծ տեղ է տալիս հատկապես որակի ենթակառուցվածքի միջոցով տեղական արտադրության մրցունակության բարձրացման մեխանիզմներին, ինչպես նաև արտաքին շուկաներում մեր արտադրողների համար առեւտրի տեխնիկական խոչընդոտների վերացմանը: Այդ առումով յուրաքանչյուր տարի մշակվում են հարյուրավոր նոր ազգային ստանդարտներ, ներդրվում են չափումների միասնականությունն ապահովող նոր էտալոններ, կատարելագործվում է հավատարմագրման համակարգը, իրականացվում է շուկայում անարդար մրցակցության ու տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման վերահսկողություն»,** – ասել է էկոնոմիկայի փոխնախարարը:

Միջոցառման մասնակիցներին ողջունել է նաեւ Ռուսաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության Տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման եւ համապատասխանության գնահատման կոմիտեի փոխնախագահ Անդրեյ Լոցմանովը: Վերջինս շնորհավորել է մասնակիցներին միջոցառման անցկացման, իսկ մրցանակակիրներին կարեւոր մրցանակների շնորհման կապակցությամբ եւ նշել, որ **«վերջին տարիներին Հայաստանն ակտիվորեն աշխատում է մեզ հետ՝ որակի պահանջների բարձրացման ուղղությամբ: Հայկական արտադրանքն արդեն իսկ շատ հայտնի է Ռուսաստանում, սակայն այն ներկայացնելու եւ տարածելու առումով մեծ հնարավորություններ կան»:** Ա.Լոցմանովը նաեւ կարեւորել է ստանդարտների համապատասխանեցումն ու որակի ապահովումը՝ երկրների առեւտրային կապերի տեսանկյունից:

Ամենամյա մրցանակաբաշխության կարեւորության եւ առանձնահատկությունների մասին խոսել է նաեւ Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը եւ ընդգծել, որ մրցանակաբաշխության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ մրցանակների արժանացած կազմակերպությունները կարող են հետագայում մասնակցել միջազգային մրցանակաբաշխություններին:

2014 թվականին անցկացված մրցանակաբաշխության արդյունքում ՀՀ կառավարության 19 փետրվարի 2015 թվականի N 143-Ա որոշմամբ սահմանվել են մրցանակների արժանացած կազմակերպությունները, որոնց թվում է «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերությունը:

Միջոցառմանը նաեւ արժեւորվել է կազմակերպություններում որակի կառավարման համակարգի ներդրման գործընթացը եւ համապատասխան սերտիֆիկատներ են շնորհվել չորս կազմակերպության, որոնք ավարտել են համակարգի ներդրումը եւ սերտիֆիկացման գործընթացը:

Արտադրանքի եւ ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակաբաշխությունը կազմակերպվում եւ անց է կացվում յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի փետրվարի 26-ի N116 որոշմամբ սահմանված կարգով՝ արտադրանքի եւ ծառայությունների որակի բարձրացումը խթանելու, դրանց որակի կառավարման արդյունավետ մեթոդների ներդրմանն աջակցելու նպատակով: Մրցանակաբաշխությունն անց է կացվում նշված որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության կառավարության մրցանակաբաշխության հանձնաժողովի կողմից, որի նախագահը ՀՀ էկոնոմիկայի նախարարն է, իսկ քարտուղարը՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենը:

«Մեղրու ճանապարհների շահագործման եւ շինարարության ձեռնարկություն» (ՃՇՇՁ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծվել է 2011 թվականին: Այն իրավահաջորդն է «Մեղրու ՃՇՇՁ» բաց բաժնետիրական ընկերության՝ ստեղծված 1997 թվականին, վերջինս «Մեղրու ՃՇՇՁ» պետական ձեռնարկության իրավահաջորդն է: Ընդհանուր առմամբ Մեղրու ճանապարհաշինական ձեռնարկությունը վեց տասնամյակի պատմություն ունի, գործում է 1954 թվականից: Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են ճանապարհաշինությունը, քաղաքացիական եւ ռազմական նշանակության օբյեկտների շինարարությունը, խճաքարի, բետոնի, ասֆալտբետոնի, երկաթբետոնե կառուցվածքների արտադրությունը, օգտակար հանածոների արդյունահանումը: Ընկերությունում աշխատում է բարձր որակավորում ունեցող տարբեր մասնագիտության եւ շինարարության բնագավառում երկարամյա փորձ ունեցող մոտ 100 մարդ: Ձեռնարկության մեքենայական հավաքակայանում հաշվվում են 85 տարբեր մակնիշների, հզորությունների եւ տեխնիկական հնարավորություն ունեցող մեքենամեխանիզմներ եւ սարքավորումներ:

Ձեռնարկությունը 1996 թվականից ղեկավարում է Ազատ Գասպարյանը, ով ընկերության միակ բաժնետերն է: Որ ազատ Գասպարյանի ղեկավարած ձեռնարկությունը չի սահմանափակվում սոսկ ճանապարհաշինարարական աշխատանքներ իրականացնելով, պարզորոշ երեւում է նրան պարգեւների արժանացրած գերատեսչությունների ցանկից:

Ահավասիկ, ճանապարհաշինության զարգացման գործում մատուցած ծառայությունների համար, Մեղրի-Շվանիձոր-Վերիշեն-Ծավ-Կապան ավտոճանապարհի կառուցման աշխատանքներին գործուն մասնակցության համար արժանացել է «Անանիա Շիրակացի» մեդալի (2007թ.), շինարարի օրվա կապակցությամբ՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրի (2009թ.), ՀՀ քաղաքաշինության նախարարության ոսկե մեդալի (2011)՝ քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի պատվոգրի (2012), ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով՝ բանակաշինությանն ակտիվ մասնակցության համար՝ հոբելյանական մեդալի (2012 թվական):

Պարգեւների այս շարքում վերջինը մեկ ամիս առաջ ՀՀ կառավարության մրցանակն էր՝ որակի ապահովման բնագավառում: Մրցույթին հայտ էր ներկայացրել 30-ից ավելի կազմակերպություն, որից ընտրվել է վեցը: Դրանց ցանկից պարզորոշ է («Երեւանի կոնյակի գործարան», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» փակ բաժնետիրական ընկերություններ, «Դուստր Մարիաննա», ՀՀ «Դիլիջան» հանքային ջրերի գործարան», «Գյումրու գարեջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ), որ «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերությունը միակ շինարարական կազմակերպությունն է:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության որակի մրցանակին, որին արժանացել է ընկերությունը, ապա այն անցկացվել է երեք փուլով, ընդ որում՝ երրորդ փուլում ստանդարտների ազգային ինստիտուտի փորձագետների խումբը եղել է Մեղրիում, իրականացրել ասֆալտբետոնի, ճանապարհաշինության մեջ օգտագործվող մյուս շինանյութերի որակի ստուգում, ճշտել դրանց համապատասխանությունը ներկայացվող պահանջներին: Նաեւ այցելել է շինարարությունում օգտագործվող շինանյութերի պատրաստման արտադրամասեր, Մեղրու բժշկական կենտրոնի շինարարություն, ինչպես նաեւ Ագարակի զորամասի ավտոհավաքակայան, թեեւ այս վերջինը, քանի որ շահագործման է հանձնված, չէր մտնում մրցույթի չափորոշիչների մեջ:

**«Պարտավորեցնող է մրցանակն այն առումով, որ միշտ աչքի առաջ ենք ունենալու շինաշխատանքների որակը, նաեւ պատրաստ ենք մեզ շնորհված մրցանակին տեր կանգնել: Նաեւ մտադիր ենք նոր տեխնիկա ու տեխնոլոգիա ներդնել՝ շինարարական աշխատանքի որակն անհրաժեշտ մակարդակի վրա պահելու համար,** – ասում է ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանը, - **ուրախալին այն է, որ որակին ուշադրություն է դարձվում, գուցե կգա ժամանակը, որ մենք առանց մրցույթների կարող ենք շինաշխատանքների պատվեր ստանալ, բազմիցս լսում ենք պատվիրատու կազմակերպություններից, որ մրցույթներում ավելի ցածր գին առաջարկող կազմակերպությունները պարզապես ձախողում են գործը, չեն տեղավորվում աշխատանքներն ավարտելու նախատեսված ժամկետի մեջ»:**

Ձեռնարկության տնօրեն Ազատ Գասպարյանի փոխանցմամբ՝ ընկերությունն աշխատանքային ճակատի պակաս չունի, 2015-ին նախատեսված է Մեղրու տարածաշրջանային հիվանդանոցի շենքի շինարարության ավարտը, ընթացիկ տարում առաջին պլանին է նաեւ Ագարակի զորանոցի շինարարությունն ավարտելը, ինչպես նաեւ Մեղրու ջրամատակարարման համակարգի վերակառուցումը: Նախատեսվում է Մեղրի-Քաջարան խճուղու հինգ կիլոմետրանոց ավտոճանապարհատվածի նորոգում: Դե իսկ Մեղրու տարածաշրջանի միջպետական, հանրապետական ու մարզային ճանապարհների պահպանում եւ շահագործում իրականացվում է յուրաքանչյուր օր ու ժամ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**




ՀՀ կառավարության մրցանակը՝ տրված «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ին


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԻՊԼՈՄ

«Մեղրու ՃՇՇՁ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը

Մրցանակը հավաստող վկայականը՝ ստորագրված ՀՀ վարչապետի կողմից




Ճանապարհաշինարարները մրցույթի են ներկայացել այս վահանակով:

# Լուրեր

Մարտի 24-ին Սյունիքի մարզում էր ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Գորիսի թիվ 4 ավագ դպրոց այցելելուց հետո Գորիսի դրամատիկական թատրոնի դահլիճում նա հանդիպեց մարզի կրթական հաստատությունների ղեկավարների հետ: Նախարարը ներկայացրեց ընթացիկ տարվա անելիքները, կրթության ոլորտի առաջնահերթությունները: Հանդիպմանը մասնակցում էր եւ ելույթ ունեցավ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Նախարարն ու մարզպետը պատվոգրեր հանձնեցին առարկայական օլիմպիադաների մարզային փուլում առաջին տեղ զբաղեցրած աշակերտներին, իսկ ֆիզիկա եւ մաթեմատիկա առարկաների օլիմպիադայի հանրապետական փուլի հաղթողներին՝ դրամական պարգեւներ: Այնուհետեւ Սուրեն Խաչատրյանն ու Արմեն Աշոտյանը Սիսիանի թիվ 5 հիմնական դպրոցում մասնակցեցին Հովհաննես Թումանյանի, Ակսել Բակունցի կիսանդրիների, Կոմիտասի արձանի, Հայոց գրերի հուշասյան եւ խաչաղբյուրի բացման արարողությանը: Հուշարձանախումբը կառուցվել է վերջին տարիներին՝ դպրոցի նախկին տնօրեն Հովիկ Ալեքսանյանի նախաձեռնությամբ եւ քանդակագործ Իվան Սիմոնյանի ձեռամբ:

Մարտի 15-ին Սյունիքի մարզի մի քանի գյուղական համայնքում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Լոռ գյուղում վերընտրվեց գործող գյուղապետ Դավիթ Առուստամյանը, Կաղնուտում գյուղապետ ընտրվեց Արթուր Հովհաննիսյանը, Շուռնուխում՝ Հակոբ Արշակյանը, Որոտանում (Գորիս) ՝ Սուրիկ Օհանջանյանը: Իսկ Որոտանում (Սիսիան), Շուռնուխում, Նոր Աստղաբերդում ընտրվեցին ավագանու անդամներ:

Մարտի 19-ին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն այցելեց Ռ.Մինասյանի (նախկին Լեռնագործների) փողոցի սկզբնամասում գտնվող հանրակացարան: Տարիներ շարունակ մարդիկ բնակվել են այնտեղ ժամանակավորի կարգավիճակով: Սյունիքի մարզպետի միջնորդությամբ ՀՀ կառավարությունը գումար է հատկացրել՝ տարածքը սեփականաշնորհելու եւ նվիրատվության կարգով բնակիչներին հանձնելու համար: Արդյունքում 13 ընտանիք ստացավ այնտեղ օրինական բնակվելու իրավունք, իսկ սեփականաշնորհման վկայականները շուտով կհանձնվեն նրանց: Շենքը ոչ բարվոք վիճակում է գտնվում, մարզպետը խոստացավ հնարավորության դեպքում լուծել նաեւ այդ հարցը:

Ինչպես տեղեկացնում են ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարությունից, Տաթեւ-Աղվանի-Կապան հանրապետական նշանակության ավտոճանապարհի 23-րդ կմ հատվածում մարտի 19-ին տեղի ունեցած քարաթափման հետեւանքով ճանապարհի երթեւեկելի պաստառի հիմնական հատվածը փակվել է, եւ ճանապարհաշինարարները կատարում են համապատասխան աշխատանքներ՝ ճանապարհը լիարժեք երթեւեկելի դարձնելու համար:

Սիսիանցի կանայք ազգային պատկերասրահի Սիսիանի մասնաճյուղում ներկայացրել են իրենց աշխատանքները: Արդեն երկրորդ տարին է, ինչ կանանց միամսյակին ընդառաջ սրահը լցվում է կնոջ ներաշխարհի գույներով ու տրամադրություններով, հնչում են շնորհավորական խոսքեր ու բարեմաղթանքներ: Ընդհանուր առմամբ իրենց ստեղծագործություններով ցուցահանդեսին մասնակցում է ութ կին: Ներկայանում են տարբեր ժանրերով՝ յուղաներկ աշխատանքներից մինչեւ ուլունքագործություն: Առաջին անգամ ցուցահանդեսին մասնակցում է նաեւ ամիսների կենսագրություն ունեցող Սիսիանի՝ կանանց զարգացման ռեսուրս կենտրոնը՝ կարպետագործի աշխատանքներով: Կանայք իրենց ստեղծագործություններով փորձում են ներկաներին հաղորդել իրենց ասելիքը՝ նուրբ, գարնանաբույր: Պատկերներն ու գույները երբեմն ավելի պերճախոս են ու դիպչում են հոգու լարերին՝ համոզված են նրանք:

# Երբ մանկության օրրանն է կանչում...

**Շնորհակալություն**

Վաչագանը Կապանի հին գյուղերից է (այժմ՝ թաղամաս): Վայրի բնությունը ոչինչ չի խնայել գեղատեսիլ այս անկյան համար: Լինելով քաղաքից ընդամենը 5կմ հեռավորության վրա՝ այն աչքի է ընկնում իր անապական ու զով օդով, դարավոր անտառներով, վեհաշուք Խուստուփով: Այստեղ գրեթե ամեն ինչ վայրի է ու գեղեցիկ:

Ասում են՝ ով գեթ մեկ անգամ լինում է Վաչագանում, հավերժ սիրահարվում է նրա բնությանը: Երեւի այդպես է, որովհետեւ վաչագանցին դժվար է լքում ծննդավայրը, իսկ եթե բաժանվում է, ապա դա լինում է ժամանակավոր:

Շատ անվանի մարդիկ է տվել Վաչագանը՝ գիտնականներ, բժիշկներ, նկարիչներ, ովքեր յուրովի օգտակար են եղել գյուղին: Բայց նրանց մասին չէ, որ ուզում եմ գրել, այլ նրանց, ովքեր, հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվելով գյուղից, չեն մոռանում գյուղը: Խոսքս օվկիանոսից այն կողմ գտնվող, Կանադայում բնակվող Գարիկ Գեւորգյանի եւ մոսկվայաբնակ Տիգրան Բունիաթյանի մասին է: Իրենց ծննդավայրին սիրահարված այս տղաները չեն մոռանում մանկության արահետները, չեն թողնում, որ այդ արահետները կարոտեն իրենց: Նրանք ամեն ամռան հանգստանալու են գալիս գյուղ: Գալիս են, ցավակից լինում մարդկանց: Ավելին: Նրանք ուզում են բարեկարգ տեսնել գյուղը եւ իրենց մասնակցությունն են բերում գյուղին: Կարծում եմ՝ բոլորովին էական չէ՝ ինչպես: Ուստի, որպես Վաչագան թաղամասի լիազոր, իմ երախտագիտությունն եմ հայտնում նրանց եւ ասում. **«Շնորհակալություն, տղանե՛ր: Ես հպարտ եմ, որ դուք ծնունդով այս գյուղից եք»:**

**ՍՎԵՏԼԱՆԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ**
**Վաչագան թաղամասի լիազոր**

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**

# Մորիս Արմենակյան

**Երկրային կյանքին անժամանակ հրաժեշտ փվեց Մորիս Արմենակյանը:**



Ծնվել է Սիսիանի շրջանի Սպանդարյան գյուղում 1949թ. նոյեմբերի 7-ին: Սովորել է նախ՝ Սպանդարյանի 8- ամյա, ապա Անգեղակոթի միջնակարգ դպրոցում: Միջնակարգն ավարտելուց հետո տեղափոխվել է Երեւան եւ աշխատել Կիրովի անվան քիմիական կոմբինատում՝ բանվոր: Այստեղ էլ ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը: Աշխատելուն զուգահեռ սովորել է Երեւանի Մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանում, Երեւանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Բուհն ավարտելուց հետո աշխատանքի է անցել հարազատ գյուղում: 1974թ. ընտրվել է կոմերիտմիության Սիսիանի շրջկոմի քարտուղար, ապա աշխատել կուսշրջկոմում՝ հրահանգիչ, քաղլուսկաբինետի վարիչ: 1982թ. գողծուղվել է բարձրագույն կուսակցական դպրոց, որն ավարտելուց հետո նշանակվել է Սիսիանի կուսշրջկոմի կազմբաժնի վարիչ: 1991 թվականից զբաղվել է ձեռնարկատիրությամբ, այնուհետեւ՝ Սիսիանի շրջխորհրդի գործկոմի կազմբաժնի վարիչն էր: Մորիս Արմենակյանն աշխատել է նաեւ Սիսիանի հումանիտար քոլեջի տնօրենի տեղակալ, ապա՝ Սյունիքի մարզպետի խորհրդական:

Կյանքում եւ աշխատանքում նրան բնորոշ էին սկզբունքայնությունը, սկսած գործն ավարտին հասցնելու պատրաստակամությունը: Այդ հատկանիշների եւ մարդամոտության ու անմիջականության շնորհիվ ընդմիշտ կմնա ճանաչողների հուշերում:

**Մի խումբ ընկերներ**

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**

# Նինա Հովսեփյան

**«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմն իր ափսոսանքն է հայտնում Նինա Հովսեփյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին:**



Բանասիրական գիտությունների թեկնածու (1971), դոցենտ (1981) Նինա Հովսեփյանը ծնվել է 1929թ. Գորիս քաղաքում: Ավարտել է Ա.Բակունցի անվան միջնակարգ դպրոցը, Երեւանի հեռակա մանկավարժական ինստիտուտի մատենագիտության բաժինը, 1970-ից դասախոսել է մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղում: Թեկնածուական թեզը վերաբերում է Պարույր Սեւակի ստեղծագործություններին: Գրել է «Պարույր Սեւակ: Կենսամատենագիտություն» (1989), «Պարույր Սեւակն իմ հուշերում» (1996) գրքերը: Հեղինակ է 60 գրականագիտական հոդվածի: Կազմել է «Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում» ժողովածուն (1999, համահեղինակներ՝ Ջուլիետա Թունյան, Քաջիկ Միքայելյան):

Մինչեւ կյանքի վերջը դասախոսում էր Գորիսի պետական համալսարանում:

Նինա Հովսեփյանը դուստրն է ազգային գործիչ Նիկոլայ Հովսեփյանի, ով 1918-1920թթ., Անդրանիկ Զորավարի, Արսեն Շահմազյանի, Արշակ Շիրինյանի, Նժդեհի հետ միասին մեծ դեր է խաղացել Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Նիկոլայ Հովսեփյանը 1931թ. գնդակահարվել է Գորիսի մերձակա Շորին ձորում:

Նինա Հովսեփյանը «Սյունյաց երկիր» թերթի բարեկամներից էր եւ մշտապես կապ էր պահպանում լրագրի ստեղծագործական անձնակազմի հետ, ժամանակ առ ժամանակ թղթակցում թերթին: Վերջին անգամ մեզ ուղարկեց (20 հունվարի 2015թ.) «Բանաստեղծի ծնունդը» փոքրիկ հոդվածը՝ Պարույր Սեւակի ծննդյան 91-ամյակի առթիվ, որը ներկայացնում ենք ստորեւ:

■

# Բանաստեղծի ծնունդը

## Պարույր Սեւակի ծննդյան 91-րդ փարեդարձի առթիվ

20-րդ դարի գրական մեծագույն երեւույթներից մեկը Պարույր Սեւակ բանաստեղծի ծնունդն էր: Դա սովորական ծնունդ չէր, այլ աստվածային արարում՝ հուռթի ու բեղուն, ինչպես ծնունդը հուր-հեր Վահագնի, ինչպես ծնունդը Սասնա ծռերի:

Անհանգիստ ու որոնող, գտնող եւ տարակուսող, ճշմարտությանն անընդհատ հետամուտ նրա պոեզիան մարդկային կյանքի շարունակական ընթացքի մեջ առլեցվում է նոր որակներով եւ ներկայություն դառնում բոլոր ժամանակների համար: Եթե «Անմահները հրամայում են», «Անհաշտ մտերմություն», «Սիրո ճանապարհը», «Նորից քեզ հետ» գրքերը վերելքներով ու վայրէջքներով, անկումներով եւ խոյանքներով բանաստեղծին հանեցին գրական նոր ճանապարհի, ապա «Անլռելի զանգակատունը» կիզակետը դարձավ նրա ողջ քնարերգության: Շատ-շատերը զգացին, որ գործ ունեն գեղարվեստական մտածողությանն անսովոր ո՛չ շարքային երեւույթի հետ: Պարույր Սեւակը եկավ արարելու մեր հավերժական լինելիության հիմնը, ոգեկոչելու ժողովրդի մնայուն ցավի՝ Մեծ եղեռնի արդար հատուցման պահանջը: Գրիգոր Նարեկացու մասին խոսելիս Սեւակն ասում էր. «Նարեկացու «Մատյանը» մեր գրականության Աղթամարա վանքն է, լոկ այն զանազանությամբ, որ «Մատյանը» անկործանելի է ստուգապես»: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Սեւակի պոեմն էլ այդ մատյան-վանքի զանգակատունն է, անլռելի զանգակատունը՝ նույնպես անկործանելի ստուգապես:

Նա եկավ նաեւ իր հանճարի ուժով պանծացնելու մարդուն, խորին շեշտվածությամբ արժեւորելու նրան որպես մեծագույնը բոլոր արժեքներից: Դարի ափի մեջ դնելով մարդուն եւ քննելով նրան իր լավ ու վատ կողմերով, իր առավելություններով ու թերություններով՝ օրհներգեց նրան, եւ այդ օրհներգը հնչեց որպես մարդու փառաբանության, մարդու պանծացման կոչ:

Եվ, վերջապես, եկավ նա գործող հրաբխի պես իր հոգու խառնարանից լույս ու ջերմություն արարելու, աշխարհին մաքրություն պարգեւելու եւ Աստծու պես գոչելու՝ «Եղիցի լույս»:

«ԵՂԻՑԻ ԼՈՅՍ ԵՎ ԵՂԵՎ ԽԱՎԱՐ»- կարդում ենք նրա մահվան հուշաքարին: Բայց իր հավերժական ներկայությամբ նա ցրեց բոլոր խավարները եւ դարձավ շողարձակող մի հուր՝ «մաքուր-վսեմի, անկեղծ-անսուտի»:

Մեզ մնում է ասել՝ օրհնվի քո ծնունդը, բանաստե՛ղծ, եւ թող հավերժորեն լույս հեղվի քո սուրբ շիրիմին:

**ՆԻՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**ՎԱՃԱՌՎՈՒՄ** է երեք սենյականոց բնակարան Կապանի Թումանյան 9 շենքի 5-րդ հարկում (թատրոնի հարեւանությամբ): Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (077) 062802 հեռախոսահամարով:

**Ի գիտություն բաժանորդների**

Ընթանում է «Սյունյաց երկիր» թերթի 2015թ. բաժանորդագրությունը: Հայտնում ենք, որ թերթի տարեկան բաժնեգինը ***10,000*** դրամ է:



Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 24.03.2015թ.: